www.acrpc.am

Իրավական մշակույթ

Չկա հասարակություն առանց իրավունքի

Ubi societas ibi jus

երկշաբաթաթերթ
թիվ 6 (9)
2007 թ. ապրիլի 30

ԱՊՐԻԼԻ 24. ՕՐ ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ ՈԳԵԿՈՉՄԱՆ

ՋԱՀԵՐՈՎ ԵՐԹ՝ ԴԵՊԻ ՃԻՃԵՌՆԱԿԱԲԵՐԴ

Հայոց մեծ եղեռնի 92-րդ տարելիցի կապակցությամբ ավանդական ջահերով երթը ապրիլի 23-ին սկսվեց Ազատության հրապարակից և ձգվեց մինչև Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Արդեն իններորդ տարին անցկացվող երթը կազմակերպել էին ՀՅԴ Հայաստանի երիտասարդական և «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունները: Երթին մասնակցում էին հազարավոր մարդիկ Հայաստանի բոլոր մարզերից, Արցախից, ինչպես նաև ԱՄՆ-ի, Եվրոպական շատ երկրների և Թուրքիայի հայ երիտասարդության ներկայացուցիչներ:

Արմենպրես

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը շարունակում է ընդլայնվել: Այդ գործընթացը աշխարհի տարբեր երկրներում ու տարբեր ատյաններում ստանում է խիստ զանազանվող ընթացքներ, ինչը բավական դժվարացնում է համապատասխան երևույթների դասակարգումը: Ստորև բերված ամփոփագրում մենք փորձել ենք ներկայացնել այս գործընթացի հնարավորին չափ սեղմ պատկերը, ընդ որում՝ ոչ միշտ ենք խստորեն հետևել «ճանաչում» տերմինի իրավաբանական ճշգրտությանը: Իրոք, մի պետություն ընդունում է խորհրդարանի բանաձև, երկրորդը՝ հայտարարություն, երրորդը՝ օրենք: Մեր կարծիքով, դրանք բոլորը ճանաչման ձևեր են, թեև ոչ միշտ է կիրառվում «ցեղասպանություն» տերմինը: Մենք միայն դասակարգել ենք այս իրավական ակտերը ըստ ժամանակի և ըստ դրանք ընդունող մարմինների, անհրաժեշտության դեպքում ավելացնելով նաև ճշգրտող մեկնաբանություններ:

Անմիջական արձագանքներ

Առաջին պաշտոնական արձագանքները 1915թ. և հետագա մի քանի տարիների թուրքական կառավարության կողմից հայերի ջարդերի մասին եղել են անմիջապես հենց այդ տարիներին: Հիշեցնենք, որ այդ ժամանակ «ցեղասպանություն»՝ «գենոցիդ» տերմինը դեռևս գոյություն չուներ. այն ընդունվել է միայն 1948թ. ՄԱԿ-ի համանուն համաձայնագրի տեքստում: Հիշատակման համար առավել արժանի են հետևյալ ակտերը.

- Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կողմից 1915 թ. մայիսի 24-ին ընդունած համատեղ հռչակագրում արձանագրվում է, որ ապրիլի կեսերին մի շարք հայկական բնակավայրերում կոտորածներ են տեղի ունեցել, իսկ օսմանյան կայսրության կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել կայսրության հայ բնակչության դեմ: Եռյակ միության կառավարությունները հայտարարում են, որ բոլոր հանցագործությունների համար պատասխանատու են օսմանյան կայսրության կառավարության բոլոր անդամները:

- ԱՄՆ-ի Կոնգրեսը և Սենատը մի քանի անգամ անդրադարձել են հայկական ջարդերին՝ մասնավորապես կոչ անելով ԱՄՆ-ի նախագահին՝ միջոցներ ձեռնարկել տուժածներին օգնելու համար: Դրանք են. 1916 թ. փետրվարի 9-ին (Սենատի բանաձև), 1919 օգոստոսի 6-ին Կոնգրեսի որոշում, նաև 1920 թ. մայիսի 11-ին ԱՄՆ-ի Սենատի որոշումը Հայաստանի Հանրապետության անկախությունը ճանաչելու մասին, որում նշվում է, որ «հստակ վեր է հանվել ճշմարտությունը հայ ժողովրդի դեմ իրագործված զանգվածային կոտորածի և այլ հանցագործությունների վերաբերյալ»:

- Մեքքայի շարիֆ Ալ Հուսեյն իբն Ալիին 1917 թվականին դատապարտել է հայերի կոտորածը: Այս շարքին պետք է դասել նաև բուն Թուրքիայի զինվորական տրիբունալի դատավճիռը երիտթուրքերի կառավարության անդամների մեղավորության մասին՝ հայերի ջարդերի համար. 1919 թ. հուլիսի 5:

Տես էջ 2

ԱՆԱՐԳԱՆՔԻ «ՀԱՆՃԱՐԵՂ» ՊՏՈՒՂԸ...

Հայտնի է, որ անբարոյականությունը և նրանից բխող բոլոր հանցագործություններն ու մեղքերը քստմնելի իրողություններ են: Հայտնի է նաև, որ երբ հանցագործությունը չի բացահայտվում, չի հրապարակվում և չի պատժվում, շարունակում է իր մեղավոր ընթացքը՝ ավելի մեծ չարիքներ պատճառելով հասարակությանը, երկրին, մարդկանց:

Չարագործները սիրում են խավարը, որտեղ կարող են թաքցնել իրենց մութ դեմքերն ու սև գործերը: Միայն այն ճշմարտությունը, որ լույսն ու հրապարակայնությունը կործանարար են չարի ու հանցագործի համար, ցույց է տալիս, որ հարկ է բացահայտել ու պախարակել յուրաքանչյուր անբարո արարք՝ կանխելու հետագա վարակը: Եթե չարը չի դատապարտվում, չի քարկոծվում, ապա այսօրվա մարմնավաճառության նման այլևս հրապարակավ է իր պիղծ ծառայություններն առաջարկում...

2006թ.-ի դեկտեմբերի 11-ին, ժ. 12-14-ի սահմաններում, մինչ Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակում ընթանում էր «Կողմնացույց» մարդու իրավունքների երիտասարդական ձեռնարկի հայերեն թարգմանության շնորհանդեսը, որն իր հատուկ ներկայությամբ պատվել էր Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության տեղեկատվության բաժնի ղեկավար, տնօրենի խորհրդական, Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի պարոն Գի-Միշել Բրանդտները և ողջույնի ու շնորհավորանքի խոսքեր էր հղում, մարդկային կերպարանքով ինչ-ինչ արարածներ (Երևանի Դավիթ Անհաղթի փողոցում) ՀՍԻԿ-ի ավտոմեքենայի բեռնախցիկից գողանում են նրա ճամպրուկները...

Ի՜նչ ամոթ, ի՜նչ խայտառակություն ու անարգանք՝ մեր հասարակության ու երկրի համար: Անհապաղ տեղեկացվեցին ՀՀ Արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ ոստիկանությունը, կատարվածի մասին պաշտոնապես տեղեկացվեց նաև ԵՄ գրասենյակը Ստրասբուրգում:

Բոլորը տեղեկացվեցին, ամբողջ աշխարհն իմացավ, միայն հայ հասարակությունը մնաց անտեղյակ, որ հերթական անգամ մրոտվեց իր անունն ու հեղինակությունը:

Հրապարակայնությանը կողմ լինելով հանդերձ, այս ամիսների ընթացքում ՀՍԻԿ-ը չը-բարձրաձայնեց կատարվածի մասին, մտածելով «չխանգարել» մեր «արհեստավարժ» հետաքննիչներին՝ կատարելու իրենց «գործը»:

Եվ ահա վերջերս Երևանի Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժանմունքի ավագ քննիչ Ն. Ղալումյանից տեղեկացանք, որ «ՀՀ օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցված թիվ 09116106 քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդ. 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավվող անձի անհայտ լինելու **պատճառաբանությամբ**»...

Եվ հանճարեղ, և՛ զավեշտալի, և՛ ցավալի է: Իհարկե, խնդիրն այստեղ հայերենի թերիմացությունն է, այլապես ո՞ր քննիչը կհանդգներ նման անկեղծ խոստովանություն կատարել...

Սպասելի՞ էր այսպիսի «արդյունքը»...

Կատարվածի համար ՀՍԻԿ-ը ներողություն է խնդրել պարոն Բրանդտներից, փորձելով ամեն կերպ մեղմել առաջին անգամ Հայաստան ոտք դրած ու կողոպտված մարդու բացասական տպավորությունները: Որքանո՞վ հաջողվեց՝ չգիտենք:

Բայց մինչև ե՞րբ պետք է մեր հասարակությունը հանդուրժի իր տականքներին: Մինչև ե՞րբ պետք է այսպիսի «աշխատանքի» համար մեր՝ հարկատուներիս միջոցներով գոյացող բյուջեն մսխեն իրավապահ համարվող պատկան մարմինները, միաժամանակ՝ չերաշխավորվեն ու չպաշտպանվեն անհատի ու հասարակության անվտանգությունը, մարդկային իրավունքները...

Պարոն Բրանդտների մեկնելու նախօրեին մտերմիկ զրուցում էինք սրճարանում: Երբ խոսք եղավ քրիստոնեական բարոյականության մասին, ես հիշեցի Հիսուս Քրիստոսի հորդորը. «Սիրեցե՛ք ձեր թշնամիներին», որին նա հակադրվեց հարցով. «Բայց ինչու՞ մարդը պետք է թշնամի ունենա»...

Այո՛, իսկապես հիվանդ, բազմաթիվ խոցերով է պատված մեր հասարակության մարմինը: Եվ նման պայմաններում հնարավո՞ր է արդյոք հանդուրժել նրանց, ովքեր անկարող են պաշտպանել մեր հասարակությանը և ի զորու չեն պատվար լինել նրա պետության միջազգային հեղինակությանը:

ԳԵՎՈՐԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը շարունակվում է

Պետական ճանաչումներ

«Նոր» ժամանակներում ցեղասպանության ճանաչման առաջին ակտը տեղի է ունեցել մի երկրում և մի ժամանակ, որը բոլոր առումներով անսպասելի էր: Դա Ուրուգվայն էր. մի երկիր, որը շատ հեռու է մեր տարածաշրջանից: Ճանաչումն իրականացավ ցեղասպանության 50-րդ տարում, երբ նույնիսկ Խորհրդային Հայաստանում այդ հարցը, ինչպես ասում են, «միանշանակ չէր լուծված»: Եվ այսպես.

- Ուրուգվայի խորհրդարանը 1965 թվականի մարտի 26-ին ընդունեց «Հայ նահատակների հիշատակի օրվա մասին» օրենք:

Հետագայում ընդունվել են հետևյալ ակտերը.

- Կիպրոսի ներկայացուցիչների պալատի որոշումը 1982 թ. ապրիլի 29-ին:

- ՌԴ Պետդումայի 1995 թ. ապրիլի 14-ի հայտարարությունը 1915-22 թթ. հայ ժողովրդի ցեղասպանությունը դատապարտելու մասին. ապրիլի 24-ը նաև համարվել է եղեռնի զոհերի հիշատակի օր:

- Կանադայի համայնքների պալատը 1996 թ. ապրիլի 23-ին բանաձև է ընդունել հայ ժողովրդի ողբերգության 81-րդ տարելիցի առթիվ, ըստ որի՝ ապրիլի 20-27-ը հայտարարվել և այնուհետև նշվում է որպես մարդկանց հանդեպ անմարդկային վերաբերմունքի հիշատակի շաբաթ: Սենատի ներկայացուցիչների պալատը բանաձևեր է ընդունել նաև 2002թ. հունիսի 13-ին ու 2004 թ. ապրիլի 21-ին:

- Հունաստանի խորհրդարանը 1996 թ. ապրիլի 25-ին ընդունել է որոշում, որով ապրիլի 24-ը համարվել է «Թուրքիայի կողմից 1915 թ. հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

- Լիբանանի խորհրդարանը ընդունել է մի քանի բանաձևեր, այդ թվում՝ 1997 թ. ապրիլի 3-ին, 2000 թ. մայիսի 11-ին:

- Բելգիայի Սենատը 1998 թ. մարտին ընդունել է բանաձև 1915 թ. Թուրքիայի կողմից հայոց ցեղասպանության իրականացումը ճանաչելու մասին:

- Իտալիայի խորհրդարանը՝ 2000 թ. նոյեմբերի 16-ին:

- Շվեյցարիայի Ազգային խորհուրդը՝ 2003թ. դեկտեմբերի 16-ին:

- Սլովակիայի Ազգային ժողովը՝ 2004թ. նոյեմբերի 30-ին:

-Նիդերլանդների ներկայացուցիչների պալատը՝ 2004թ. դեկտեմբերի 21-ին:

- Վենեսուելայի Ազգային ժողովը՝ 2005թ. հուլիսի 14-ին:

- Լիտվայի Սեյմը՝ 2005թ. դեկտեմբերի 16-ին:

- Ֆրանսիան ընդունել է բազմաթիվ ակտեր. 1998 թ. մայիսի 29-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը պաշտոնապես ճանաչել է ցեղասպանությունը. նախագիծը Սենատի կողմից ընդունվեց 2000թ. նոյեմբերի 7-ին և օրենք դարձավ 2001թ. հունվարի 29-ին: Իսկ 2006 թ. հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունել է հայոց ցեղասպանության ժխտման համար քրեական պատասխանատվություն սահմանող օրինագիծը: Օրենքի ուժ ստանալու համար օրինագիծը պետք է հաստատվի Ֆրանսիայի Սենատի կողմից և ստորագրվի երկրի նախագահի կողմից:

- Արգենտինան նույնպես ընդունել է բազմաթիվ ակտեր. 1993 թ. մայիսի 5-ին Սենատը բանաձև է ընդունել, որում իր համերաշխությունն է հայտնում հայ համայնքի հետ, որը 20-րդ դարի առաջին ցեղասպանության զոհ է դարձել: Հայտարարություններ կամ բանաձևեր են ընդունվել 1998 թ. ապրիլի 22-ին, 2003թ. օգոստոսի 20-ին, 2004թ. մարտի 31-ին: 2006թ. հունվարին Արգենտինայում ընդունվեց օրենք, որով ապրիլի 24-ը հռչակվել է ժողովուրդների միջև հանդուրժողականության և հարգանքի օր:

- ԱՄՆ-ի Կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 1975 թ. ապրիլի 9-ին բանաձև է ընդունել, ըստ որի՝ նույն թվականի ապրիլի 24-ը հայտարարվել է մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակի համազգային օր, և դիմել է ԱՄՆ-ի նախագահին հայտարարությամբ հանդես գալու կոչով, որում վերջինս կհորդորի այդ օրն ընկալել իբրև ցեղասպանության բոլոր զոհերի, մասնավորապես, 1915 թ. ցեղասպանության ենթարկված հայերի հիշատակի օր: Նման բանաձևեր են ընդունվել նաև 1984 թ. սեպտեմբերի 12-ին, 1996 թ. հունիսի 11-ին: Հայոց ցեղասպանության խնդիրն իր տեղն է գտել ամերիկյան նախագահների ամենամյա ելույթներում՝ սկսած Ռոնալդ Ռեյգանից (1981 թ. ապրիլի 22): 1994-2000 թթ. նախագահները ամեն տարի հայտարարություններ են արել ապրիլի 24-ի կապակցությամբ՝ ընդսմին «ցեղասպանություն» բառի փոխարեն օգտագործելով «տեղահանություն և զանգվածային ջարդեր» ձևակերպումը:

- Շվեդիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովը 2000 թ. մարտի 29-ին ընդունել է բանաձև, որում կարծիք է հայտնվել, որ անհրաժեշտ է անցկացնել անկանխակալ միջազգային ուսումնասիրություն հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանության առնչությամբ:

- Հովհաննես Պողոս Երկրորդ Հռոմի Պապը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը 2000 թ. նոյեմբերի 10-ին հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որում հիշատակվում է հայկական ցեղասպանությունը:

- Բրիտանիայի կառավարությունը Հոլոքոսթի հիշատակի օրվա ոգեկոչման արարողության ժամանակ 2002 թ. հունվարին առաջին անգամ հիշատակել է հայոց ցեղասպանությունը:

- Գերմանիայի Բունդեսթագը 2005թ. հունիսի 15-ին ընունել է բանաձև, որով իր հարգանքի տուրքն է մատուցում Առաջին աշխարհամարտից առաջ և նրա ընթացքում զոհված հայերի հիշատակին, սակայն չի գործածում «ցեղասպանություն» բառը: Հետաքրքիր է, որ բանաձևը պարունակում է մեղադրանք ոչ միայն Թուրքիայի, այլև այն ժամանակվա Գերմանիայի կառավարության հասցեին, որը «փորձ չարեց միջամտել այդ դաժանություններին ու վերջ տալ դրանց»:

Տեղական (ներպետական) ակտեր

Բազմաթիվ են այն դեպքերը, երբ հայոց ցեղասպանությունը այս կամ այն կերպ ճանաչող որոշումներ են ընդունում որևէ երկրի առանձին վարչական միավորները՝ նահանգները կամ քաղաքները: Այսպիսի դեպքեր լինում են մեծ մասամբ այն երկրներում, որոնք համապետական մակարդակով չեն ճանաչել հայոց եղեռնը (ինչպես՝ ԱՄՆ-ում), բայց լինում է և այնպես, որ տեղական մակարդակով որոշումներ են ընդունվում ի լրումն համապետական որոշման (բնորոշ օրինակ է Արգենտինան):

- ԱՄՆ-ում հայոց ցեղասպանության ճանաչման ակտեր ընդունվել են 46 նահանգներում և բազմաթիվ քաղաքներում:

- Իտալիայի 35 վարչական սուբյեկտներ (քաղաքներ, նահանգներ, շրջաններ) արդեն պաշտոնապես ընդունել են հայոց ցեղասպանությունը:

- Բուենոս-Այրեսի օրենսդիր մարմինը համապատասխան հռչակագիր է ընդունել 1998 թ. ապրիլի 16-ին:

- Շվեյցարիայի Ժնևի Կանտոնի կառավարությունը պաշտոնապես ճանաչել է հայոց ցեղասպանությունը 2001 թ. դեկտեմբերի 10-ին:

- Ավստրալիայի Նոր Հարավային Ուելս նահանգի խորհրդարանը ցեղասպանությունը ճանաչող և ապրիլի 24-ը հայ զոհերի հիշատակի օր հռչակող բանաձև է ընդունել 1997թ. ապրիլի 17-ին: Նման բազմաթիվ օրինակներ կան Կանադայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում (Ուելս):

Միջպետական և այլ կազմակերպությունների հայտարարություններ

- ՄԱԿ-ի զինվորական հանցագործությունների հարցերով հանձնաժողովի (1948 թ. մայիսի 28), ինչպես նաև խտրականության կանխման և ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցերով ՄԱԿ-ի ենթակոմիտեի նախկին հանձնաժողովի զեկուցումներում (1985 թ. հուլիսի 2) իր հիշատակվել է նաև հայոց ցեղասպանության խնդիրը:

- Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 6-րդ ասամբլեայում (1983 թ. օգոստոսի 10) հայերի բնաջնջման և արտաքսման մասին զեկույց է ներկայացվել:

- Եվրախորհրդարանը 1987 թ. հունիսի 18-ի իր բանաձևում ճանաչել է 1915-17 թթ. օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության փաստը: Խորհրդարանն ընդունում է, որ Թուրքիան չի կարող պատասխանատվություն կրել օսմանյան կայսրությունում հայերի դեմ հանցագործությունների համար և ցեղասպանության փաստի ճանաչման հետևանքով չեն կարող բխել ներկայիս Թուրքիային ուղղված քաղաքական, իրավական կամ նյութական հավակնություններ: Հայոց ցեղասպանությունը այս կամ այն կերպ շոշափող բանաձևեր ընդունվել են նաև 2000 թ. նոյեմբերի 15-ին, 2002 թ. փետրվարի 28-ին և այլն:

- Ամերիկյան հրեական միաբանությունների միությունը 1989թ. նոյեմբերի 7-ին ցեղասպանության հարցով բանաձև է ընդունել:

- Ցեղասպանության ուսումնասիրության ընկերակցությունը 1997 թ. հունիսի 13-ին քննել է հայոց ցեղասպանության խնդիրը, ըստ որի գնահատման, 1915 թ. ցեղասպանությունը համապատասխանում է ցեղասպանության կանխարգելման և պատժման մասին ՄԱԿ-ի համաձայնագրի չափանիշներին:

- Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 51 անդամներ 1998 թ. ապրիլի 24-ին, արտահայտելով իրենց անձնական կարծիքը, ընդունել են գրավոր հռչակագիր, որում նշվում է, որ 1915 թ. ապրիլի 24-ը սկիզբ դրեց օսմանյան կայսրությունում հայերի ոչնչացման պլանի իրագործմանը: Հռչակագիրը ստորագրողների թվում է ԵԽ ԽՎ այն ժամանակվա նախագահ լորդ Ռասել Ջոնսթոնը: 2001թ. մայիսի 14-ին փաստաթղթին միացել էին արդեն 82 անդամ:

- Ժողովուրդների մշտական տribունալը 1984 թ. ապրիլի 16-ին դատավճիռ է կայացրել, որում հայերի ցեղասպանությունը ճանաչվում է որպես միջազգային հանցագործություն, որի համար պատասխանատվություն պետք է կրի թուրքական պետությունը:

- Երիտասարդ մարդկանց քրիստոնեական ընկերակցությունների (ԵՔՄԸ) Եվրոպական միության գործադիր կոմիտեն 2001 թ. մարտի 18-ին Երևանում բանաձև է ընդունել, որով ճանաչել և դատապարտել է «20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի հանդեպ կատարված ցեղասպանությունը»:

- Ուղղափառության եվրոպական միջխորհրդարանական վեհաժողովին (ՈԵԵՎ) մասնակից երկրների միջազգային համաժողովը դատապարտեց օսմանյան կայսրությունում 1915 թվականին իրականացված հայոց ցեղասպանությունը (անց է կացվել Երևանում 2001 թ. փետրվարի 21-22-ին, մասնակցել են ՈԵԵՎ-ի անդամ 20-ից ավելի եվրոպական երկրներ):

- Ժնևում ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի 57-րդ նստաշրջանը 2001 թ. ապրիլի 25-ին միաձայն ընդունել է Հայաստանի նախաձեռնությամբ ներկայացված «Կոնվենցիա ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» բանաձևը:

- Լիս Անցումնային արդարադատության միջազգային կենտրոն կազմակերպությունը 2003թ. փետրվարի 10-ին ներկայացրեց հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի պատվերով կատարված վերլուծության արդյունքը, ըստ որի՝ 1915թ. իրադարձությունները միանգամայն համապատասխանում են «ցեղասպանություն» սահմանմանը:

- Իսրայելի գլխավոր ռաբբի Յոնա Մեցգերը 2005թ. նոյեմբերի 22-ին այցելեց Ծիծեռնակաբերդում եղեռնի զոհերի հուշահամալիր և հայտարարեց, որ ճանաչում է 1915 թվականի հայոց ցեղասպանությունը:

Նոյյան տապան

Իրավական խորհրդատվություն

Փոխադրամիջոցի գույքահարկի վճարման կարգը և սպառողի իրավունքները

1. Սպառողների իրավունքների պաշտպանությունը: Ոչ պատշաճ որակի ապրանքի վաճառքի հետևանքները.

Սպառողը (գնորդը, ծառայությունից օգտվողը), որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել՝

ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ դրանց վերացման ծախսերի հատուցում.

բ) գնման գնի համաչափ իջեցում.

գ) նմանօրինակ նմուշի ապրանքով փոխարինում.

դ) այլ նմուշի ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով.

ե) առուվաճառքի պայմանագրի լուծում:

Սպառողը, որպես կանոն նշված պահանջները կարող է ներկայացնել ապրանքի երաշխիքային կամ պիտանիության ժամկետի ընթացքում:

Նորոգման, փոխարինման համար մեծածավալ և հինգ կիլոգրամից ավելի քաշով ապրանքի տեղ հասցնելը և սպառողին վերադարձնելը իրականացվում է վաճառողի հաշվին: Այս նպատակով սպառողի կատարած ծախսերը ենթակա են հատուցման վաճառողի կողմից:

2. Փոխադրամիջոցների (ավտոմեքենաների) գույքահարկի վճարումը

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխադրամիջոցները, այդ թվում՝ ավտոմոբիլային տրանսպորտային մրջոցները, համարվում են գույքահարկով հարկվող օբյեկտ:

Փոխադրամիջոցի հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ձիաուժ կամ կիլովատ): Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է՝ մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար.

- 1-ից *120 ձիաուժի* դեպքում յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
- 121-ից *250 ձիաուժի* դեպքում յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ 1000 դրամ:

Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը:

Համաձայն օրենքի, գույքահարկ վճարող ֆիզիկական անձը (անհատը) գույքահարկը հաշվարկում է ինքնուրույն: Տեղական ինքնակառավարման մարմինները գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնում են գույքահարկի վճարման ծանուցագրեր, սակայն ծանուցագիր չներկայացնելը գույքահարկ վճարողին չի ազատում հարկային պարտականություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից:

Ա. Պ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՀԱՅՆԱԳՐԻՆ

Հայաստանը, ի թիվս աշխարհի 81 պետությունների, միացել է Հաշմանդամների իրավունքների և արժանապատվության պաշտպանության միջազգային համաձայնագրին: Հետխորհրդային երկրներից համաձայնագիրն ստորագրել են միայն Հայաստանը, Լիտվան և Մոլդովան: Այն նպատակ ունի խթանել հաշմանդամների իրավունքների լիիրավ պաշտպանությունը, նպաստել հասարակությունում նրանց ինտեգրմանն ու հավասար մասնակցությանը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնից, մինչ այս համաձայնագրի ստորագրումը՝ հաշմանդամների իրավունքները մեկ ընդհանուր միջազգային իրավական փաստաթղթում ամրագրված չեն եղել: Աշխարհի 650 միլիոն հաշմանդամների համար այն խոստանում է դառնալ նոր դարաշրջանի սկիզբ, քանի որ հաշմանդամները ստիպված չեն լինի հանդուրժել իրենց նկատմամբ խտրական վերաբերմունքը:

Համաձայնագիրը ներառում է 50 հոդված՝ ուղղված հաշմանդամների իրավունքների պաշտպանությանը և խրախուսմանը, նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի վերացմանը, աշխատանքի, առողջապահության, կրթության և հասարակության կյանքին լիարժեք մասնակցության իրավունքների ապահովմանը, արդարադատության մատչելիությանը, անձնական անձեռնմխելիությանը, չարաշահումներից և շահագործումից ազատմանը, ազատ տեղաշարժմանը, անհատական շարժունակությանը և այլն:

Համաձայնագիրը ՀՀ-ի անունից ստորագրել է ՄԱԿ-ում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հրավերով ստորագրման արարողությանը մասնակցելու համար Նյու Յորք էին մեկնել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության ներիտասարդ անդամներ Զառա Բաթոյանը և Անի Հովհաննիսյանը: Ընդ որում, վերջինս նիկարագուացի 19-ամյա Մաուրիսիո Գուտիերեզի հետ աշխարհի բոլոր հաշմանդամ երեխաների և երիտասարդների անունից ուղերձ է հղել ՄԱԿ-ի անդամ պետություններին՝ կոչ անելով հետամուտ լինել համաձայնագրում ամրագրված սկզբունքների իրականացմանը:

Նշենք, որ վերջին տարիներին Հայաստանում իրականացվում է հաշմանդամության սոցիալական մոդելի վրա հիմնված քաղաքականություն, ինչը ենթադրում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովում, նրանց համար հավասար պայմանների ստեղծում: Սակայն համաձայնագրի ընդունումը նախատեսում է որոշ մոտեցումների փոփոխություն, օրենսդրական դաշտի նորացում՝ համաձայնագրի դրույթներին համահունչ:

ՈՉ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԻ ԵՐԵԿՈ

Մի քանի օր սպասել էի այդ երեկոյին: Չեմ կարող ասել՝ անհամբեր կամ սրտատրոփ, բայց սպասել էի, մտադրվել՝ ընտանիքիս հետ միասին միանամ բոլորին:

Ավաղ, որքան մեծ էր հիասթափությունս «երեկոյից» տուն վերադառնալիս:

Երեկոն այդ՝ ապրիլի 23-ի երեկոն էր, Վանաձորում, ժամը 21.00-ին նախատեսված երթը վառված մոմերով դեպի ցեղասպանության զոհերի հուշակոթող՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու գավիթ...

Հիասթափություն 1.

Երթի սկզբնակետ հասնելով՝ դժգույն տեսարանի ականատես եղա: Երթին մասնակցելու էին եկել մի խումբ երիտասարդներ՝ շուրջ 4 տասնյակ մարդ: Հանրապետության երրորդ՝ ավելի քան 100000 բնակիչ ունեցող քաղաքում, միայն այդքան մարդ էր ժամանակ հատկացրել հարգանքի տուրք մատուցելու ավելի քան մեկուկես միլիոն զոհերի հիշատակին: Իսկ որքան «հայրենասեր և ազգասեր» են այդ 100000-ը ճոխ և առատ սեղանների շուրջ կենացներ արտասանելիս, հատկապես՝ մեծ ու փոքր պաշտոնյաները, պատգամավորության թեկնածուները ...

Հանդիպեցի իմ լավ բարեկամին, որը մոլորված կանգնել էր, մտածելով, որ երևի ինչ-որ բան շփոթել է՝ երթի օրը կամ ժամը, կամ էլ գուցե վայրը: Համոզվեցինք, որ ոչինչ էլ չենք շփոթել:

Հիասթափություն 2.

«Ես բարգավաճից եմ», «Հանրապետականները թող առաջ գնան», «Գնանք հրապարակ, հետո մի բան կանենք» և այլ նմանատիպ արտահայտություններով, կատակներով, ծիծաղով երթի մասնակիցները վառված մոմերը ձեռքներին շարժվեցին դեպի հուշակոթող: Տպավորություն էր ստեղծվում, որ մենք մասնակցում ենք երիտասարդական զվարճալի միջոցառման:

Հասկանալով, որ երթի մասնակիցների տրամադրությունը և երթի ընթացքը որևէ ընդհանուր բան չունեն օրվա խորհրդի հետ, որոշեցինք չմիանալ երթին:

Մենք կազմակերպեցինք մեր «երթը»՝այլ երթուղով: Հասանք ցեղասպանության զոհերի հուշակոթող, վառեցինք մոմերը և մտանք եկեղեցի՝ քահանայից (նա սպասում էր երթի մասնակիցներին) օրհնություն ստանալու համար: Տեր հորը խնդրեցինք երթի մասնակիցներին հորդորի օրվա խորհրդին հարիր վարքագիծ դրսևորել, պահպանել պարկեշտության կանոնները:

Հիասթափություն 3.

Տուն վերադառնալիս ճանապարհին հանդիպեցի երթի մասնակիցներին. նրանց թիվն ավելացել էր, շուրջ 60 մարդ էին դարձել: Ցավոք, դա միայն քանակական փոփոխություն էր: Բովանդակությունը նույնն էր, գուցե ավելի վատը, քան երթի սկզբում: Շարունակ՝ բարձրձայն ծիծաղ, կատակներ... Այս ամենը երբեմն ընդմիջվում էր «Մեր Հայրենիքը» հիշեցնող քառատողերի խառնիճաղանջ արտասանությամբ և դրան համարժեք երաժշտական կատարմամբ:

Հիասթափություն 4.

Եկեղեցուց հեռու ու մոտիկ՝ տարբեր կուսակցությունների և ԱԺ պատգամավորության առանձին թեկնածուների բազմաթիվ նախընտրական շտաբներ են տեղակայված, որոնցում նաև երթի այդ ժամին էր (ժ. 21-22) եռուզեռ. հավանաբար խիստ զբաղված էին: Այնքան զբաղված, որ չէին միացել երթին...

Կուսակցություններն ու թեկնածուները ոչ մի ջանք չեն խնայում քաղաքացիների հետ հանդիպումների ժամանակ մարդահավաք կազմակերպելու, օգտագործելով ամեն միջոց. ծանոթ-բարեկամներից սկսած մինչև վարչական լծակներ: Ուշագրավ է, որ գրեթե ամեն մի հանդիպման ժամանակ նրանց հաջողվում է հավաքել անհամեմատ ավելի շատ թվով մարդկանց, քան այդ երեկո մասնակցում էին երթին: Հավաքում են ու վստահորեն ասում, թե որքան հայրենասեր, ազգասեր են իրենք, որքան գործ են արել մեր հայրենիքի համար, որքան ներդրում ունեն հայոց ցեղասպանության միջազգայնացման գործում և այլն, և այլն:

Երևի այդ պահին շտաբներում քննարկում էին հենց այդ հարցը ...

Ամենամեծ հիասթափությունը.

Երթին մասնակցելու գնացի ինձնամյա որդուս հետ: Ճանապարհին փորձեցի պատասխանել նրա բոլոր ինչու՞-ներին, իսկ եթե-ների՞ն: Բացատրեցի՝ ուր ենք գնում և ինչու համար, ով է Կոմիտասը, և որքան շատ է մեկուկես միլիոնը, ինչու պետք է մշտապես հիշի ապրիլի 24-ը, ինչու պետք է լինել հայրենասեր, և ով է թուրքը, ինչու Անին և Արարատը Հայաստանում չեն, ինչու պետք է ունենալ ամուր հավատք:

Հազարավոր մարդկանց մեջ միմյանց կորցնելու մտավախությամբ նախապես խնդրել էի, որ ուշադիր լինի, մոտիցս հեռու չգնա: Իսկ եթե միմյանց կորցնենք՝ դիմի ամենամոտ կանգնած ոստիկանին: Ներկայացվածից հետո սա արդեն ծիծաղելի էր թվում...

Տունդարձի ճանապարհին լուռ էինք: Խոսելու ցանկություն չունեի, որդիս էլ չստանալով մի քանի ինչու-ների պատասխանները, այլևս հարցեր չտվեց:

Այդ երեկոն նրա առաջին և անմոռանալի մասնակցությունն էր համայն հայության Հիշատակի օրվա արարողությանը:

ԵՐԵԿՈՆ ԻՐԱՊԵՍ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՉԷՐ

Հ.Գ. Ապրիլի 24-ին մենք բոլորս ականատեսը եղանք, թե ինչպես է 23-ի երեկոն կազմակերպվել մայրաքաղաքում, սփյուռքահայ գաղթօջախներում, ինչպես են ընթանում նախատեսված և չնախատեսված, հավուր պատշաճի կազմակերպված արարողությունները: Իսկ մարզե՞րը ...

*Փառք Աստծո, որ Հանրային և հանրապետական հիմնական հեռուստաընկերությունները **24-ի օրը** լուսաբանեցին և ներկայացրեցին բարձր մակարդակով: Ողջ օրը հեռուստաէկրանների առջև գամված, մենք՝ մարզերի բնակիչներս, մեծից փոքր «մասնակիցը» դարձանք բոլոր միջոցառումների: Շնորհիվ ներկայացված բարձրակարգ հաղորդումների համոզվեցինք, որ հարկ եղած դեպքում ի զորու ենք մեր հավաքական ուժով «սարեր շրջել»: Եվ ուրեմն պահն է, որ միավորենք մեր ուժերը հանուն Հայաստանի, հանուն հայապահպանության, հանուն մեր Աստվածային հավատքի, հանուն հետագա ապրիլի 24-երի համընդհանուր կազմակերպման:*

Համոզված եմ, որ կոգեշնչվեն նաև մարզերը...

ԱՐԱՅԻԿ ՊԱՊԻԿՅԱՆ

ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՄԱՆ ՆՈՐ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հասարակական կյանքի տարբեր բնագավառներում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների զարգացման նպատակով «Եվրասիա» հիմնադրամի տրամադրած դրամաշնորհներով Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, Հայաստանի շինարարների միությունն ու Իրավունքի պաշտպան միավորումն իրականացրել են Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկությունների շրջանում վեճերի լուծման այլընտրանքային եղանակների մշակման ու կատարելագործման ծրագիր:

«Արմենպրես»-ի մամուլի սրահում ծրագրի ամփոփման նպատակով վերջերս իրավիրված ասուլիսի ընթացքում «Եվրասիա» հիմնադրամի Հայաստանի ներկայացուցչության տնօրեն Արա Նազինյանը նշել է, որ նախաձեռնությունը միտված է եղել վերջին տարիներին ձեռնարկատիրությանը, մասնավորապես՝ փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, խոչընդոտող «օլիգարխիկ կապիտալիզմի» դրսևորումների հաղթահարմանը: Ըստ նրա՝ մասնավոր ձեռներեցության լայնատարած զարգացման համար անհրաժեշտ է տնտեսական գործունեության ընթացքում ծագող վեճերը լուծել ոչ թե ծախսատար դատական համակարգի, այլ վեճերի այլընտրանքային լուծման միջոցով: Այդ մեթոդներն արդյունավետ են գործում տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների համար: Շատ երկրներում վեճերի այլընտրանքային լուծումը դարձել է մասնավոր հատվածում վեճերի լուծման արդյունավետ մոտեցում:

Ըստ Ա. Նազինյանի՝ ծրագրի արդյունքում ստեղծվել է արբիտրաժային դատարան, ավելի քան 500 ձեռնարկատերերի, իրավաբանների և ուսանողների համար կազմակերպվել են արբիտրաժի մասին դասընթացներ, տրամադրվել անվճար իրավաբանական խորհրդատվություն, Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի ուսումնական ծրագրում ներառվել է միջնորդ դատավարության մասին դասընթաց, ՀՀ կառավարությանը ներկայացվել են առաջարկություններ՝ «Արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը վերանայելու վերաբերյալ:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի տնօրեն Կարեն Զադոյանը, ներկայացնելով իր կազմակերպության կատարած աշխատանքները, նշեց, որ Երևանում և հինգ մարզերում իրականացվել է լայնամասշտաբ տեղեկատվական արշավ: Ավելի քան 290 ձեռնարկատերերի, իրավաբանների և ուսանողների համար ուսումնական 18 դասընթաց է կազմակերպվել: Միջազգային չափորոշիչներին համապատասխան կազմակերպված դասընթացներով վերապատրաստվել են 25 միջնորդներ և վեճ հարթողներ, ովքեր հանրապետության մարզերում պետք է միջնորդ դատավարական ծառայություններ մատուցեն և կազմակերպեն նմանօրինակ դասընթացներ: Փոքր և միջին ձեռնարկատերերին բաժանվել է «Վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմներ» ուղեցույցի 2 հազար օրինակ:

Ըստ Կ. Զադոյանի՝ երկրում ձևավորվում է վեճերի այլընտրանքային լուծման նոր հնստիտուտ, և անհրաժեշտ է օգտագործել յուրաքանչյուր հնարավորություն՝ ստեղծելու լուրջ ուսումնական կենտրոն, որտեղ կպատրաստվեն դատավորներ, միջնորդ-հարթողներ և վեճերն այլընտրանքային մեթոդներով լուծող այլ մասնագետներ: «Իրավունքի պաշտպան միավորում» կազմակերպության տնօրեն Արթուր Դավթյանը նշել է, որ միավորումն անցկացրել է 12 կլոր-սեղան քննարկումներ, երկու համաժողով, հրավիրել հեռուստատեսային քննարկումներ: Ձեռնարկատերերին ներկայացվել է արբիտրաժին վերաբերող օրենսդրությունը: Հրապարակված հազար գրքույկները, 50 օրաթերթային և հեռարձակված 250 ռադիոհայտարարությունները նպաստել են միջնորդ դատարանին դիմող գործարարների թվի ավելացմանը: Կազմակերպությունը արբիտրաժի մասին դասընթացներ է անցկացրել 7 բուհերում՝ ներգրավելով իրավաբանության ֆակուլտետի 200 ուսանողի:

Ա.Դավթյանի դիտարկմամբ՝ եթե փոքր և միջին ձեռնարկատերերը վեճերի լուծումը վստահեն որևէ առևտրային արբիտրաժի, դատական համակարգի վրա ծախսվող ֆինանսական և ժամանակային կորուստներն ավելի քիչ կլինեն: Հայաստանի շինարարների միության տնօրեն Գուրգեն Մինասյանի խոսքերով՝ միությունը գործունեությունն ուղղել է շինարարական կազմակերպությունների առևտրային վեճերի լուծման այլընտրանքային եղանակների մշակմանը:

Հանրապետությունում շինարարության բուռն զարգացման պայմաններում, ըստ նրա, փոքր և միջին շինարարական կազմակերպությունների առջև ծառացել էր շինարարական բիզնեսում ներառված տընտեսվարող սուբյեկտների, կառուցապատող, կապալառու, ենթակապալառու, մատակարար և սպասարկող կազմակերպությունների միջև ծագող առևտրային վեճերի արագ և արդյունավետ լուծման խնդիրը: Միության 120 անդամներ ընտրվել են որպես միջնորդ-դատավորների հավանական թեկնածուներ և ստացել համապատասխան գիտելիքներ:

Միությունը հրատարակում է «Ճարտարապետություն, շինարարություն» պարբերականը, որի միջոցով տեղեկատվություն է տարածել միջնորդ-դատավարության մասին: Երեք կազմակերպություններն ստեղծել են իրենց կառույցներին առընթեր առևտրային արբիտրաժներ:

Նշվել է, որ ծրագիրն իրականացնող կազմակերպություններն ընտրվել են բաց մրցույթի արդյունքում: Ծրագրի բաղադրիչներն արժեցել են միջինը 15-20 հազար դոլար:

Ի ՇԱՀ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

2006-ի նոյեմբերին կազմավորվեց ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական միջոցառումների կազմակերպման Լոռու մարզային կենտրոնը՝ Վանաձորի երիտասարդներին հնարավորություն ընձեռելով ավելի սերտ կապեր հաստատելու և միմյանց հետ շփվելու: Արդեն հաստատված ավանդույթի համաձայն, յուրաքանչյուր ուրբաթ բանավեճի ակումբի շրջանակներում երիտասարդները քննարկում են իրենց հուզող թեմաները:

Այս անգամ կլոր-սեղան քննարկումը նվիրված էր Հայաստանում «Գենդերային հավասարության հիմնախնդիրներին»: Հրավիրված էին Հայաստանի Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիայի (ՀԿԿԱ) Վանաձորի մասնաճյուղի փոխնախագահ Արմինե Կյուրեղյանը, Գուգարաց թեմի Սուրբ Նարեկացի եկեղեցու ներկայացուցիչ Հրաչիկ կիսասարկավագ Ջուլհակյանը, երիտասարդական կենտրոնի և Լոռու ուսանողների միության (ԼՈՒՄ) անդամներ, մարզի ուսանողական միության ներկայացուցիչներ: Հրավիրված էր նաև Վանաձոր համայնքի ավագանու անդամ Գայանե Քալանթարյանը, որը ինչ-ինչ պատճառով չէր ներկայացել: Կլոր-սեղանի նպատակն էր քննարկման արդյունքում պարզել՝ ՀՀ-ն ունի՞ գենդերային հավասարության խնդիր, ինչպիսի՞ն են հարաբերությունները այս գործընթացում, կա՞ն արդյոք թերություններ, արժե՞ հավասարման նշան դնել կնոջ և տղամարդու միջև: Հրավիրյալները իրենց կարծիքներն արտահայտեցին հիմնախնդրի շուրջ: Արմինե Կյուրեղյանը նշեց, որ գենդերային խնդիր որպես այդպիսին ՀՀ-ում գոյություն չունի, որովհետև դեռ 19-րդ դարում հայ տղամարդը հանդուրժողականություն ցուցաբերեց և թույլատրեց, որ կինը կրթություն ստանա. հաշվի առնելով, որ երեխային մայրն է դաստիարակում, նա չի կարող հեռու լինել կրթական համակարգից, նա չի կարող անկիրթ լինել եւ դաստիարակել կրթված մարդ: Այժմ պետք է ընդունել, որ հասարակության մեծ մասը կանայք են, որից 63 տոկոսը բարձրագույն կրթություն են ստացել: Գենդերային հավասարությունը, ըստ ՀԿԿԱ-ի փոխնախագահի, ենթադրում է որոշումներ կայացնելու գործընթացում հավասար իրավունքներ և հավասար պայմաններ, որը շատ դեպքերում անտեսվում է: Ասել է թե՝ անտեսվում է հասարակության 53 տոկոսի կարծիքը:

- Սա մասնավորապես կարևոր է, որովհետև կինն է ծնում երեխա, նա ավելի մոտ է կանգնած սոցիալական խնդիրներին, ավելի շատ կանայք են հակված այդ խնդիրներին արդյունավետ լուծում տալու: Այսօր ամուր են այն ընտանիքները, որտեղ կինը տընտեսվար է, բավականին քաջատեղյակ ու ինտելեկտուալ է: Այս դեպքում ինչու՞ այդ խելքը չի օգտագործվում երկրի ներսում լուրջ որոշումներ կայացնելու հարցում, դեռ ավելին՝ կանանց իրավունքները ոտնահարվում են աշխատանքի ընդունվելիս: Օրինակ, բարձր վարձատրվող աշխատատեղերը տղամարդիկ են զբաղեցնում: Բանկային համակարգում չես տեսնի կին ներկայացուցիչների, եղածներն էլ կամաց հետ են մղվում: Ստացվում է, որ կանայք միայն մանկավարժ կարող են աշխատել կամ, լավագույն դեպքում, տնօրենի պաշտոն զբաղեցնել, իսկ տղամարդկանց դպրոցում չես տեսնի:

Ի հակադրություն Արմինե Կյուրեղյանի, Հրաչիկ կիսասարկավագ Ջուլհակյանը նշեց, որ ինքն անձամբ բազմիցս դիմել է դպրոցներին այնտեղ աշխատելու համար և մերժվել է, միշտ նույն պատասխանն է ինչել. «Տղամարդ ուսուցչի կարիք չունենք»: Հայաստանում իրենց իրավունքներից չօգտվելու համար նա մեղադրեց կանանց և հարց- պահանջ ուղղեց.

-Ինչու՞ կանայք չեն գնում դեպի օրենսդրական դաշտ, կանանցից է կախված, թե ինչու են իրենք այդքան պասիվ: Եթե ձեզ ասում են, որ դուք կին եք և միայն այդ պատճառով չեք կարող համապատասխան աշխատանքի անցնել, պահանջեք, թե որ օրենսգրքով կամ ինչ իրավունքով են ձեզ մերժում:

Անդրադառնալով Աժ-ում կին ներկայացուցիչների առկայությանը, Գուգարաց թեմի ներկայացուցիչը նշեց, որ ավելի շատ կողմ է, որ կանայք մեծամասնություն կազմեն, իսկ իդեալական խորհրդարան ունենալու համար լավ կլինի, որ ձայները հավասարաչափ բաշխված լինեն: «Չկա այնպիսի տղամարդ, որը չցանկանա՝ իր կողքի կինը ավելի գեղեցիկ, ավելի գրագետ լինի: Ինձ թվում է, յուրաքանչյուր տղամարդ իր սրտի խորքում գիտակցում է, որ հայ կանայք արժանի են բարձր ատյաններում ներկայանալի լինելու և իրենց ունակությունները ի նպաստ հասարակությանն օգտագործելու»...

Հատկապես այս մտքի շուրջ թեժ քննարկում ծավալվեց, մասնավորապես Արմինե Կյուրեղյանը նշեց, որ Աժ-ի պատգամավոր ընտրելիս ամենևին պարտադիր չէ, որ ձայները հավասարաչափ բաշխված լինեն.«Մենք ընտրում ենք արժանավորներին, սակայն ինչպե՞ս է ստացվում, որ 131-ից արժանի են լինում միայն 7-ը»:

Հանդիպման նախաձեռնող խմբի ղեկավար, երիտասարդական կենտրոնի միջոցառումների կազմակերպման առաջատար մասնագետ Արտյոմ Նահապետյանը նախ անդրադարձավ **գենդեր** բառի ոչ հայեցի լինելուն, առաջարկելով ընդունել և այնուհետ ռազմավարության մեջ օգտագործել թարգմանված համարժեքը, նաև մտահոգություն հայտնեց, որ, ամբողջությամբ ընդունելով սեռերի միջև հավասարության եվրոպականացված տարբերակը, հայ աղջիկն ու կինը կզրկվեն իրենց իրական կերպարից, քանզի Հայաստանյայց Առաքելական եկեղեցին պսակի արարողության ժամանակ պատվիրում է լինել հնազանդ:

Եկեղեցու ներկայացուցիչը չբացառեց, որ կարելի է 2-ը համատեղել լինել հնազանդ և գործունյա: ՀԿԿԱ-ի փոխնախագահն էլ ավելացրեց, որ վաղուց անցել են այն ժամանակները, երբ հայ աղջիկներին դաստիարակում էինք և ասում. «Եթե ամուսնացել ես, նա է տղամարդը, նա էլ պետք է քեզ ապահովի»: Այդպիսով սահմանափակվում էր կնոջ ինքնուրույնության ձգտումը:

Երիտասարդները նշեցին, որ բոլոր պատասխանատու օղակները նույնիսկ ԵՎրոպայում զբաղեցնում են տղամարդիկ (այս դեպքում էլ հիշեցին, որ Ֆրանսիայի պաշտպանության նախարարն է կին):

Բուռն ու անմիջական քննարկումը պատմական ակնարկի առիթ դարձավ դեպի խորհրդային տարիներ, և պատմությանը քաջատեղյակ երիտասարդներից մեկը նշեց, որ ԽՍՀՄ-ի ԳԽ-ում ներկայացված կթվորուհիները որևէ օրենսդրական որոշում չէին կայացնում: Սրան ի պատասխան հնչեց ՀԿԿԱ-ի փոխնախագահի փաստարկը, թե՝ «ԳԽ-ում նստած տղամարդ-հովիվն էլ չէր խառնվում այդ որոշումներին: Հիմա գոնե խորհրդարան մուտք են գործում այն կանայք, ովքեր քիչ թե շատ խելացի են»:

Քննարկման ընթացքում ներկաներն անդրադարձան այն խնդիրներին, որոնք խոչընդոտում են կանանց մուտքը կառավարման օղակներ, օրենսդիր և գործադիր իշխանություններ, նշվեց, որ ՀՀ 13 նախարարից միայն 1-ն է կին՝ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարը (նախկին փոխնախարարն էլ էր կին՝ Լիլիթ Ասատրյանը: Նա բազում մշակութային նախագծերի հեղինակ էր՝ «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնը, Համահայկական խաղերը, ութ մարզերում երիտասարդական կենտրոնների կազմավորումը): Ստացվում է, որ մինչ այս ոչ մի տղամարդ նախարար չի գոհացրել կառավարության ղեկավարներին: Արմինե Կյուրեղյանն առաջարկեց թողնել քննարկումը և մնացած 12 տղամարդ նախարարներից նշել 1 լուրջ գործ, որ մինչև հիմա տպավորվել է: Ներկաներից ոչ ոք այդպիսի դեպք չհիշեց:

Երիտասարդների կարծիքները այնքան էլ հակասական չէին. նրանք բոլորն էլ ընդունում էին, որ ժամանակները փոխվել են, և ապրել այնպես, ինչպես խորհրդային տարիներին են ապրել, հնարավոր չէ: Միայն թե անհրաժեշտ է, որ յուրաքանչյուրն զգա իր գործի անհրաժեշտությունը, որպեսզի միասին ձեռք-ձեռքի տված կառուցեն առողջ հասարակություն և ուժեղ պետություն, որի համար առաջին հերթին երիտասարդ կարող ուժերի անհրաժեշտություն է զգացվում...

ՀՀ Լոռու մարզպետարանի և Վանաձորի քաղաքապետարանի բազում վարչություններում ու բաժիններում ղեկավար կին չկա, բացառությամբ՝ Վանաձորի քաղաքապետարանի հոգաբարձության և խնամակալության հանձնաժողովի, որտեղ գլխավոր մասնագետը Լեռնուհի Գևորգյանն է: Հաջորդ բաժինը, որտեղ պետի տեղակալի պարտականությունները կատարում է Ասյա Պետրոսյանը՝ կրթության, մշակույթի և սպորտի բաժինն է: Կին է նաև քաղաքապետարանի գանձապահը՝ Ասյա Պալյանը: Կրթության համակարգի 28 միջնակարգ և 4 հատուկ դպրոցների տնօրենները հավասարաչափ են բաշխված. 16-ը տղամարդիկ են, նույնքան էլ՝ կանայք:

Պատկերն այլ է նախակրթարաններում. 20 մանկապարտեզների վարիչները կանայք են, բոլոր աշխատողները՝ նույնպես: Ուսուցիչների 78 տոկոսը կանայք են, 22-ը՝ տղամարդիկ, ներառյալ ֆիզկուլտուրայի ուսուցիչներն ու զինղեկները:

ՆԵԼԼԻ ԴԱՎԹՅԱՆ

ՄԻԱՎՈՐՎԵ՛ՆՔ ՀԱՆՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ.

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 6500 ԵՐԵԽԱ ԶՐԿՎԱԾ է ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

2007 թ. ապրիլի 27-ին ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակում ընթացավ *Համընդհանուր կոչ հանուն կրթության* (ՀԿՀԿ) քարոզարշավի «ՀԿՀԿ լսումները»:

Հանդիպմանը մասնակցում էին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՀՀ Կրթության և գիտության, Արտաքին գործերի նախարարությունների, Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, լրագրողներ հանրապետության տարբեր մարզերից:

ՀԿՀԿ հայաստանյան կոալիցիայի անդամները ներկայացրեցին քարոզարշավի ընթացքը, **«Միավորվե՛նք հանուն կրթության իրավունքի»** նշանաբանով Համընդհանուր գործողությունների շաբաթվա շրջանակներում կատարած աշխատանքները՝ մարդկային և թղթե շղթաների կազմում, Հովհաննես Թումանյանի «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքի բեմականացում, ծավալվեցին քննարկումներ՝ կրթության ոլորտում առկա հիմնախնդիրների վերաբերյալ:

ՀՄԻԿ-ի նախագահ Գևորգ Մանուկյանը ողջունեց մասնակիցներին և նշեց, որ քարոզարշավը նպատակ ունի հորդորել երկրների կառավարություններին, որպեսզի նրանք գործնական քայլեր կատարեն ստանձնած պարտավորություններն ու խոստումները իրականացնելու ուղղությամբ, քանզի դեռևս աշխարհում 80 մլն. երեխաներ հնարավորություն չունեն կըրթություն ստանալու, և 1 մլրդ. մարդ տառաճանաչ չէ:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տնօրեն Շելդոն Յեթը ողջունեց քարոզարշավի կազմակերպիչներին, ներկաներին և կարևորեց այն հանգամանքը, որ քաղաքացիական հասարակությունն անմիջական մասնակցություն ունի հազարամյակի զարգացման կարևորագույն նպատակներից մեկի ապահովման գործում:

ՄԱԶԾ-ի «Մարդկային զարգացման ազգային զեկույց» ծրագրի թիմի ղեկավար Սերոբ Խաչատրյանը մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն ցավալի պաշտոնական տվյալների վրա, որ եթե 2002-2003 ուսումնական տարվա ընթացքում Հայաստանում դպրոցից դուրս մնացած երեխաների թիվը կազմում էր 1500, ապա 2005-2006 ուսումնական տարում այդ թիվը կազմել է 6500: Հայաստանը իր երբեմնի առաջատար դիրքերը զիջել է նաև ՅՈՒՆԵՍԿՈ-ի կրթության զարգացման համաթվի հաշվարկման ցուցակում. վերջին՝ 2004 թ. տվյալներով մեր երկիրը 29-րդն է, իսկ 2002-ին գտնվել է երկրորդ տասնյակում:

ԿԳ նախարարության ներկայացուցիչ Արա Էդոյանը, ողջունելով նմանատիպ նախաձեռնությունները, նշեց, որ պետությունը միայնակ չի կարող լուծել բոլոր խնդիրները և դրանց լուծումներ տալ, ուստի այստեղ շատ կարևոր է հասարակական կազմակերպությունների մասնակցությունը, քանի որ իրենք ավելի մոտ են կանգնած հասարակությանը:

Հայաստանում քարոզարշավի աշխատանքները համակարգում է ՀՄԻԿ-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել ՀՄԻԿ-ի կայքէջ՝

www.acrpc.am

և www.campaingnforeducation.org

ԱՀՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՄԻԿ-ի հանրային հարաբերությունների բաժնի վարիչ

ԴԱՍԱՊՐՈՑԵՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կրթության մեթոդաբանություն

ԹԵՄՄԻՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ

Շիրակի մարզի

Ղարիբջանյան գյուղի միջնակարգ դպրոցի «Իրավունք» առարկայաշարի ուսուցչուհի

Հանրակրթություն կազմակերպող մարմիններն արդեն ոչ միայն գիտակցում, այլև բարձրաձայնում են, որ ուսումնառության ավանդական ձևը սպառել է իրեն, և այս ոլորտում բարեփոխումները դարձել են օրակարգային հարց, անհրաժեշտություն: Կարծես թե ուսուցման կազմակերպման ավանդական ձևին փոխարինելու է գալիս *ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակը*, որը ներառում է մի ամբողջ շարք նորագույն մեթոդներ ու հնարներ՝ դասի արդյունավետ կառավարման համար: Բայց ակնհայտ է, որ անցումը միանգամից հնարավոր չէ. այն կատարվելու է աստիճանաբար, տարիների ընթացքում:

Դասը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու նպատակով դպրոցում կիրառվում է մի հնար՝ հագեցած մի շարք մեթոդներով, որն ավանդական և համագործակցային ուսուցման արժեքավոր տարրերի համադրություն է:

Տարեսկզբից, ըստ նստատեղերի, շարքերի, դասարանում հայտարարվում է մրցույթ:

Յուրաքանչյուր շարք իր համար որոշում է անուն (օրինակ, 1-ին՝ Տիգրան Մեծ և 2-րդ՝ Արտաշես առաջին, կամ 1-ին՝ Կոտայքի մարզ, 2-րդ՝ Շիրակի մարզ, 3-րդ՝ Երևան կամ «Աստղիկ» ու «Անի» և այլն): Ուսուցչի կողմից յուրաքանչյուր շարքի համար նշանակվում է շարքային պատասխանատու, և ողջ ուստարվա ընթացքում շարքերը դառնում են մրցակցող թիմեր՝ համապատասխան անուններով: Թիմի յուրաքանչյուր աշակերտի ցուցաբերած օրական, ամսական, կիսամյակային, տարեկան առաջադիմությանը զուգահեռ թիմը համապատասխանաբար ստանում կամ կորցնում է միավորներ՝ հետևյալ կերպ. ուսուցիչն անցկացնում է դասը, կատարում է դասի հարցում ու գնահատում, իսկ գնահատված աշակերտի ստացած գնահատականը տրվում է տվյալ աշակերտի թիմին (օրինակ՝ եթե Անահիտը դասից ստացել է 5 (գերազանց), իսկ Մկրտիչը՝ 4 (լավ), ապա Անահիտի «Աստղիկ» թիմը ստանում է 5 միավոր, իսկ Մկրտիչի «Անի» թիմը՝ 4 միավոր, և այդպես շարունակ): Կիսամյակի և ողջ ուստարվա ընթացքում յուրաքանչյուր թիմ ստանում է որոշակի միավորների գումար, որոնք վերածվում են բալերի՝ «50 միավորը հավասար է 1 բալի» սանդղակով: Կիսամյակի վերջում ուսուցիչը 1 բալի դիմաց 1 միավորով բարձրացնում է թիմի կողմից ընտրված աշակերտների կիսամյակային (տարեկան) գնահատականը: Թիմը կարող է յուրաքանչյուր աշակերտի համար ուսուցչին տալ 1 բալից ոչ ավել (օրինակ՝ եթե «Աստղիկ» թիմը հավաքել է 180 միավոր, ապա ունի երեք բալ և 30 միավոր, ուստի թիմի աշակերտների որոշմամբ ուսուցիչը կարող է բարձրացնել երեք աշակերտի կիսամյակային գնահատականն, իսկ մնացած 30 միավորը կարող է փոխանցել հաջորդ կիսամյակ, հաջորդ ուստարի կամ էլ զրոյացնել): Բացի անհատական պարգևներից՝ այս հնարքը հնարավորություն է ընձեռնում շնորհել նաև թիմային պարգևներ՝ առաջին, երկրորդ և երրորդ տեղը գրաված թիմերի բոլոր աշակերտներին: Դրանք կարող են լինել պատվոգրեր, գովասանագրեր, խորհրդանշական հուշանվերներ և այլն:

Անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ թիմերին միավորներ տալու և թիմերից միավորներ վերցնելու կարգը պետք է կետ առ կետ նշված լինի նախօրոք ուսուցչի կողմից կազմված, աշակերտների հետ պարտադիր համաձայնեցված «Կանոնադրության» մեջ: «Կանոնադրությունն» առաջին հերթին ապահովում է արդարությունը, զերծ է պահում ուսուցչին սուբյեկտիվությունից և, որ շատ կարևոր է, վստահություն է ներշնչում աշակերտներին և թիմերին: Մրցույթի հաջողությունները պայմանավորված են ոչ միայն խրախուսանքի, այլև տույժի միջոցներով (օրինակ, եթե ըստ «Կանոնադրության» թիմի աշակերտը դասից 5, 4, 3 գնահատական ստանալու դեպքում ավելացնում է իր թիմի միավորները համապատասխանաբար, ապա «2» գնահատական ստանալու դեպքում այդ աշակերտի պատճառով նրա թիմը կորցնում է երկու միավոր: Այս պայմանը նպաստում է, որ թիմի յուրաքանչյուր աշակերտ շահագրգռված լինի, որ իր թիմակիցը ստանա բարձր միավոր կամ ընդհակառակը՝ ցածր գնահատական չստանա: Այսպիսի պայմաններում աշակերտների միջև ձևավորվում է սերտ համագործակցություն: Թիմակիցներն օգնում են միմյանց, և ամեն մեկը քաջ գիտակցում է, որ իր վատ առաջադիմությունը վնասում է թիմին և կարող է առաջացնել թիմակիցների դժգոհությունն իր նկատմամբ: Մրցույթի հետաքրքրությունը և աշակերտների շահագրգռվածությունն անընդհատ պահպանելու նպատակով ուսուցիչը, ելնելով օրվա դասի թեմատիկ առանձնահատկություններից, կազմակերպելով հետաքրքիր մեթոդներով ու հնարքներով հարուստ դասեր, պետք է դրանք ծառայեցնի մրցույթի՝ խրախուսանքի և տույժի միջոցներն ավելացնելու, նորացնելու ու փոփոխելու վրա:

Տարեսկզբից հայտարարված թիմային մրցույթը հնարավորություններ է տալիս ուսուցչին՝ թիմերին միավորներ շնորհելու և նրանց միավորները պակասեցնելու մի շարք հնարքներով դասարանում պահել և ավելի բարձրացնել կարգապահության աստիճանը: Օրինակ, մրցույթը լայն հնարավորություն է ընձեռում *ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակի* ժամանակ զրոյականի հասցնել կամ նվազեցնել այսպես կոչված զրոյական աղմուկը:

Թիմերին միավորներ շնորհելը և թիմերի միավորները նվազեցնելը լայն հնարավորություններ են ընձեռում ամփոփման կամ կրկնողության դասերը: Դրանց ընթացքում կարելի է կազմակերպել, այսպես կոչված, «Հրաշքների դաս»՝ մասնակիորեն փոփոխելով հայտնի «*Հրաշքների դաշտ*» բանական հեռուստախաղի անվանումը և ձևերը՝ դրան դրվագներ ավելացնելով նմանատիպ այլ խաղերից: Դասն անցկացվում է այսպես. ուսուցիչը գրատախտակին պատկերում է տվյալ բաժնին վերաբերող որևէ բառի տառաքանակին համապատասխան վանդակներ և առաջարկում դասարանին՝ կռահել այդ բառը տառ առ տառ, ըստ մատյանի հերթականության, կամ յուրաքանչյուր թիմից մեկական անդամ ընդգրկելով: Կարելի է դասարանը բաժանել, օրինակ, տղաների ու աղջիկների: Սխալ տառ ասելու դեպքում կռահելու հերթը անցնում է խաղի մյուս մասնակցին: Երեք տառ կռահելու դեպքում աշակերտը կարող է գնահատվել, իսկ նրա թիմի միավորները կավելացվեն: Կարելի է, օրինակ, կրկնապատկել բառը միանգամից կռահող աշակերտի թիմի միավորները, իսկ նրան գնահատել գերազանց: Մեկ դասի ընթացքում դասարանը կռահում է մեկից հինգ բառ: Դասի այս ձևի հետաքրքրությունն էլ ավելի է մեծանում այն ժամանակ, երբ ուսուցիչը թիմերից վերցնում է կանխավ որոշված չափի միավորներ և դրա դիմաց բացում է առաջին տառը: Շնորհիվ այս մեթոդի բոլորովին անկնկալ անցնում է ժամանակը, աշակերտները կրկնում են անցած դասերը և ձեռք բերում կամ ամրապնդում գիտելիքները: Շատ հետաքրքիր են նաև «*Իքս ու աստղանիշերի*», «*Բացառիկ հինգերի*», «*Գծապատկերների ու վահանագրերի*» դասերը:

«Իքս ու աստղանիշերի» դասը շատ հարմար է թե՛ օրվա, թե՛ ամփոփիչ դասերի համար: Դասն անցկացվում է այսպես. գրատախտակը բաժանվում է երկու մասի: Դասարանին տրվում է տասը հարց՝ չորս տարբերակով: Մրցույթը կարելի է անցկացնել արդեն իսկ եղած թիմերի միջև, դասարանի տղաների ու աղջիկների միջև կամ էլ առանձին աշակերտների միջև: Ընտրված պատասխանի դիմաց դրվում է հքս (X) նշանը, եթե պատասխանը ճիշտ է, հքսը մնում է հքս, իսկ սխալ պատասխանի դեպքում հքսը դառնում է աստղանիշ (*): Վերջում հաղթում է ավելի շատ հքսեր ունեցողը:

h	/	h1	h2	h3	h4		h/	h1	h2	h3	h4	
1							1					
2							2					
3							3					
4							4					

«Բացառիկ հինգեր» դասի բովանդակությունն այսպիսին է. այն աշակերտը, ով կկարողանա այնպես պատմել դասանյութը, որ ոչ մի բաղադրիչ բաց չթողնի, ստանում է կանաչ գրիչով բացառիկ հինգ, իսկ թիմի միավորները կրկնապատկվում են և հակառակը՝ որևէ բաղադրիչ բաց թողնելու դեպքում ստանում է սև գրիչով երկու, և թիմի միավորները զրոյացվում են: Այս դասի յուրօրինակությունն այն է, որ ծայրահեղ են թե խրախուսանքի և թե տույժի միջոցները: Դասն անցնում է շատ լարված, հետաքրքիր, իսկ պատասխանող աշակերտը երբեք չի մոռանում իր բացառիկ հինգի սովորած դասը:

«Գծապատկերների ու վահանագրերի» դասի համար նախօրոք աշակերտներին հանձնարարվում է դասը ներկայացնել գծապատկերով կամ վահանագրով այնքան պատկերավոր, որ ընդգծվեն դասի հիմնական հասկացություններն ու ողջ բովանդակությունը: Ներկայացվածներից ընտրվում է երեք լավագույն աշխատանք, և սկսվում է դրանց քննարկումը. նշվում են առավելությունները, թերությունները, գնահատվում է մեկ բառով, և դրվում է գնահատական 1-ից 10 միավոր համակարգով:

Շնորհիվ վերը նշված բոլոր մեթոդների՝ փոխվում է աշակերտի դերը, հնարավորություն է տրվում նրան անկաշկանդ մասնակցել քննարկումներին, կարողանալ առանց բարդույթների արտահայտել իր կարծիքը, իրեն հուզող հարցերը, սովորել լսել ուրիշներին և խոսելիս ուշադրության արժանանալ նրանց կողմից, նպաստել նրա ինքնաբացահայտմանն ու ինքնահաստատմանը: Չէ՞ որ աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ընթացքը, նրա համար նույնքան կարևորություն ունի ուսուցչի կողմից գիտելիքի մատուցման ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, որքան և գիտելիքն ինքնին:

ՍԵՅՐԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ - 60

Արդարակ շնորհավորում ենք

Ծնվել է 1947թ. Կիրովականում:

Ավարտել է Երևանի պետհամալսարանը և, Մոսկվայում, առկա ասպիրանտուրան:

1972-1989 թ.թ. Կիրովականի քիմկոմբինատում զբաղվել է գիտական աշխատանքով: Հրապարակել է 20-ից ավելի գիտական և 7 մեթոդամանկավարժական հոդվածներ: Այժմ աշխատում է Վանաձորի Վ. Տերյանի անվան (թիվ 5) դպրոցում, ունի Ֆիզիկայի հետազոտող ուսուցչի կոչում:

2000 և 2003թթ. ճանաչվել է Լոռու մարզի Տարվա լավագույն ուսուցիչ, արժանացել ՀՀ վարչապետի շնորհակալագրին:

1962-65թթ. աշխատակցել է **Վարդգես Պետրոսյանի** խմբագրությամբ լույս տեսնող «Պիոներ կանչ» թերթի «Վանաձորյան շեփոր» հավելվածին: 70 - ականներին տպագրվել են նրա առաջին բանաստեղծությունները: Այնուհետև բազմիցս հանդես է եկել մարզային և հանրապետական մամուլում:

Առանձին գրքերով լույս են տեսել ասացվածքների՝ «ՄՏՈՐՈՒՄՆԵՐ» (2001), բանաստեղծությունների «ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ» (2002) և «ԱՆՔՆՈՒԹՅՈՒՆ» (2004) ժողովածուները:

1999-ին «Հայաստան» օրհներգով դարձել է Սարդարապատի հերոսամարտին նվիրված գրական մրցույթի հաղթող:

Բազմաթիվ թարգմանություններ է կատարել ռուս և համաշխարհային դասական ու ժամանակակից պոեզիայից:

Գործ՝ *Էդուարդ Մանուկյանի (ԱՄՆ)*

ԱՌԵՂԾՎԱԾ

Ես նա եմ, ով իր խիղճը չի ծախում
Ու չի սակարկում իր էության հետ,
Նա, ով և՛ դրսում, և՛ իր օջախում
Փնտրում է միայն բարու արահետ:

Ես նա եմ, ով հին քանդվածի տեղում
Մի նոր տաճար է ուզում կանգնեցնել,
Ամեն առիթով իրեն է նեղում,
Որ ոգեկոչի այլ ջրաղացներ:

Նա, ով իր ձեռքով կրակից հանած
Շագանակներն է տալիս ուրիշին,
Սեփական հոգին պահում է փակված
Եվ կուլ է գնում ուրիշի հուշին:

Ես նա եմ, ով իր խոտորնակն անմեղ
Սեփական խղճի դատին հանձնելով,
Բոլոր պարտքերը ճգնում է մարել՝
Այլոց պարտքի դեմ մնալով ներող:

Նա, ով իր ցավը պահում է հաճախ,
Որ իր թախիծը այլոց չպատի,
Եվ հույս է տալիս, երբ ուրիշն անճար
Հոգսերի բեռն է հանձնում իր դատին:

Ես նա եմ, գուցե ինձ չհավատաք,
Ով ամեն ինչում փնտրում է արև,
Անկյուն է նետում իղձերը իր տաք,
Որ կյանքի կոչի հոգիներն ավեր:

Նա եմ, ով աստծո ամեն մի գիշեր
Ուրիշի համար աչքը չի փակում,
Երբ այդ ուրիշին տրված չէ հիշել,
Որ հոգսը նաև իմ դուռն է թակում:

Ես նա եմ, ումից քաղում անհատնում
Ու հոխորտում են հաճախ նրա դեմ,
Ում, ոնց էլ նստեմ, միշտ ծուռ են դատում՝
Փորձելով կարող ձեռքերը հատել:

Ում սփոփանքը արևն է եղել
Կամ վառ լուսինը գիշերվա կեսին,
Ով իր անհատնում տենչերը նեղել,
Սատար է կանգնել ընկերոջ ես-ին:

Նա, ով տքնանքով վաստակած հացը
Բերանից կտրել, տվել է այլին,
Խեղդել է անդուլ իր հոգու լացը,
Որ ուրիշ մեկի խինքը չմարի:

Ես նա եմ, ով դեռ չի ծնվել գուցե,
Եվ ինքն է իրեն բարեգութ թվում,
Ով իր խնդիրը չի կարող լուծել,
Սակայն ուրիշի համար է կռվում:

Ես նա եմ, ով իր մտքի մեջ անգամ
Ոչ մի ծանոթի դեռ չի նախանձել,
Ում դեմ շատ հաճախ եղան չարական,
Հոգու թռիչքն են անդադրում սանձել:

Ես այլոց տեղը միշտ ապաշխարում,
Եվ քող եմ նետում միշտ նրանց բացին,
Խենթ եմ, թէ խելառ, դեռ չեմ հասկանում,
Պատասխան չկա այս առեղծվածին:

Ու չեղավ, չեղավ մեկը աշխարհում,
Գոնե աղ ցաներ իմ արդար հացին,
Չէ, չմեղանչեմ, մարդիկ ի՞նչ անեն,
Երբ արտասվում եմ միշտ առանց լացի:

* * *

Արձագանքելով կանչիդ համրածայն՝
Անվերջ բախվում եմ ժայռոտ ափերին
Իմ երանության…

ԿԱՐՈՏ

Կարոտում եմ քեզ,
Ի՞նչ անեմ, ասա՛…
Կարո՞ղ եմ արդյոք լինել անտարբեր,
Սխր քո սիրով ինքս ինձ հասա,
Քո հմայքով եմ վերջապես հարբել:

Տեսնելիս մի պահ կարոտից հուզվում,
Ու շնչարգել եմ լինում մի պահ ես,
Մոտենալ, գրկել, խոսել եմ ուզում,
Ուզում եմ պատմել ապրումներս քեզ...

Սակայն դու վաղու՞ց հեռու ես այնքան,
Այնքա՞ն հեռացած իմ հորիզոնից,
Որ ինձ թվում է կանչում ես անվերջ,
Բայց կանչիդ ձայնը չի հասնում էլ ինձ...

Կ Ո Շ Ի Կ Ը

Կոշիկ էր:
Ծնվել էր ծառայելու,
Որ պաշտպանի մարդկանց ցեխ ու փոշուց,
Սակայն մարդիկ նրան չէին նայում,
Համարելով նրան իր մի անշունչ:
Նա իր գործն էր անում հլու ու հեզ,
Չէր տրտնջում երբեք ոչ մի բանից,
Փոշեպատ էր հաճախ, անբարետես,
Ու նեղվում էր, նեղվում նա դրանից:
Հազվադեպ էր Նրան քսուք քսվում,
Այն էլ, երբ տիրոջն էր դա անհրաժեշտ,
Կոշիկն այդ պահերին շատ էր հուզվում՝
Ամաչելով փայլից իր բարետես…
Դե կոշիկ էր, մաշվեր պիտի մի օր.
Կնճիռներով պատվեց, անհարթ դարձավ,
Հետո բկին չոքեց աղեղը նոր՝
Մի նոր կոշիկ Նրա դերն ստացավ:
Ասպարեզը մեկեն անցավ նորին.
Ինքը ոնց հնոտի նետվեց անկյուն,
Կուրացնում էր նրան ցավը խորին.
Ցեխին էին միայն Նրան հագնում:
Ծերացել էր արդեն, գույնը թափվել.
Անիմաս էր թվում կյանքը Նրան,
Նա անզոր էր՝ ելնել, դռներ թակել,
Բայց չէր ուզում մեռնել անօթևան:
Կոշիկ էր: Ծնվել էր ծառայելու,
Որ պաշտպանի մարդկանց ցեխ ու փոշուց,
Դե, այս կյանքում հինը ու՞մ է գերում…
Մոռացել են նրան, վաղու՞ց, վաղուց:

ԼԵՌԸ

Լեռը ծխում է ամպի մեջ կորած
Եվ սպիապատ սիրտ է հիշեցնում…
Նա էլ իմ սրտում թուխպի պես մնաց.
Օրն առանց նրա անհուշ է անցնում…

Գետակի աշխույժ խոխոջը հիմա
Ինձ նրա ձայնն է հիշեցնում թախծոտ,
Որ մի ժամանակ բերկրանք էր համայն,
Իսկ հիմա արդեն լոկ հուշ է լացող…

Լսում ճնճղուկի սեթևեթն անուշ
Ու նրա ձայնն եմ հիշում մեղմածոր,
Որ հուշ է դարձյալ, հեռավոր մի հուշ,
Օր-օրի վրա ինձնից հեռացող…

Տխուր եմ ինչպես աշխարհն անարև.
Սխր իմ հոգու արեգակն էր նա,
Որ պոկվեց, գնաց ինչպես մի տերև,
Ու խենթ քամու հետ շրջում է հիմա…

* * *

Աշխարհի վրա
Աշխարհի նման պիտի լինեիր,
Սակայն… մենակ ես:

ՇՈՒՆԸ ՀԱՉՈՒՄ ԷՐ

Շունն անմտորեն հաչեց փողոցում՝
Տերևներն ընկան կրակի բերան…

Փողոցում մի շուն հաչում էր անվերջ.
Մութի՞ ահից էր գուցե կլանչում:
Պատասխան չկար մութից սնամեջ.
Ու՞մ ինչ, թե անտեր մի շուն է հաչում…

Անդուլ հաչոցից քամին արթնացավ,
Սկսեց ծառի ճյուղերը թակել,
Մի քանի տերև ընկան ցիրուցան,
Թեև ապրելու տենչը չէր հատել:

Լուսնին արթնացրեց ոռնոցը քամու,
Աստղերն աչքերը ահից թարթեցին,
Խենթացած քամին մարեց անտառում.
Մարդիկ արթնացան… տերևն այրեցին:

***

Ես ուզում եմ տեղ ունենալ քո սրտի մեջ,
Զօր ու գիշեր արթուն լինել քո երազում,
Ես ուզում եմ սիրտս բանալ,
Քեզ տալ բորբոք սեր ու հուզում,
Ես ուզում եմ քեզ ունենալ,
Քե՛զ ունենալ՝ իմ լա՛վ, իմ սու՛բբ…

ԳՆՉՈՒՅԻ

Որպես գալիքի նախագուշակում
Գալիս կանգնում է հայացքիդ դիմաց
Եվ վաղվա օրն է այսօր գուշակում
Եվ մոռացվածն է վեր հանում կամաց...
Ես քեզնից շատ եմ ապրել, գնչուհի՛,
Փորձության բազում պահեր եմ տարել,
Բայց իմ ապրածը նորից գին չունի.
Քո խոսքն է նորից հավատս դառել...

Թևում է, թևում, հանգիստ չի տալիս,
Հանգիստ չի տալիս հին կարոտը մեզ.
Միշտ հյուր է գալիս մենակ մնալիս
Ու կանչում որպես կորուսյալ մի կես...
Անհնարինը դարձավ ակնհայտ,
Երբ մի օր հանկարծ աչքս բաց արի.
Տեսա, որ ներկան տանում է անհայտ,
Բայց... անհնար է դառնալ անցյալին...

ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆ

Օղակ ես նետել իմ պարանոցին
Ու ինձ կանգնեցրել աթոռի վրա.
Ես սպասում եմ քո թույլ հրոցին,
Որ այս պարանը կախաղան դառնա,

Պարանի ծայրը քո ձեռքին է դեռ
Եվ դու ես կանգնած աթոռի կողքին.
Օրիաս է թվում վճիռդ արդեն,
Եվ քո ձեռքին է նայում իմ հոգին:

Խարխուլ աթոռին ես եմ բարձրացել,
Նաև պարանն եմ ձեռքդ տվել ես,
Բայց դու իզուր ես այդպես համրացել,
Ոչ բաց ես թողնում, ոչ քաշում ես քեզ...

Ծանր է անորոշ վիճակն այս հիմար,
Կամ աթոռը տար, կամ պարանը թող:
Շատ խորհել պետք չէ որոշման համար,
Ի վերջո մի օր դառնալու ենք հող...

* * *

Քո հետքերն եմ ես որոնում անվերջ
Ու քո տեսիլն եմ փնտրում ամենուր…
Քեզ որտե՞ղ գտնեմ, հու՛յս իմ սնամեջ,
Ասա՛, ու՞ր ես, ու՞ր...

ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Վաղեմի, հեռավոր ընկերոջս՝
գեղանկարիչ ***Է. Մանուկյանին***

Աշխարհի բոլոր ճանապարհները
Հայեր են տանում:
Տանում, տանում են ու … չեն կշտանում:

Աշխարհի բոլոր ճանապարհները
Բաց են մեր առաջ…
Ջուր, ցամաք ու օդ մեզ դուրս են հանում,
Ընկած են անտեր գերանդի ու մաճ,
Աշակ չմնաց դաշտ ու բոստանում:

Աշխարհի բոլոր ճանապարհները
Այստեղից հանում՝ հեռու են տանում,
Տանում, տանում են, դեռ չեն կշտանում,

Ու մեկը չկա կանաչ լույս վառի
Տուգդարձի համար,
Սեր ու գորովով ետ պահի
Մեզնից հեռացողներին,
Նեղացողներին չգամի պատին
Խոր մոռացության,
Ուրացողներին չսիրաշահի,
Արժանիներին անկյուն չնետի
ավելորդի պես,
Ու չնեղացնի հնուց վիրավոր
Հոգիները հեզ:

Աշխարհի բոլոր ճանապարհները
Լցված են մեզնով,
Ու տարիները լցնում են էլի՛
Ճակատագրով մեզ բաժին հասած
Կամ մեր օրինությամբ
Մեր բախտը դարձած
Հին, ազգակործան երախն ահռելի…

Մինչև ե՞րբ, Աստվա՛ծ …

Բանաստեղծ Սեյրան Մալխասյանը (ձախից) ՀՅՄ նախագահ Լևոն Անանյանի հետ:
(ՀՅՄ XIV համագումար,2005թ. մայիս,Երևան)

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ

Հովհաննես Թադևոսի Թումանյանին

բանաստեղծին՝
հայկական պոեզիայի լուսավոր
եռաստղ համաստեղության
ամենապայծառ աստղին

Թող արդար լինի ճակատագիրը,
Արժանին տան քեզ դարերը վստահ.
Հայոց երկնքի նոր աստղածիրը
Սկիզբ է առնում աստղով քո հսկա.

Թող որ աստղերը բոլոր փոքր ու մեծ
Խավարը ճեղքեն իրենց առկայծով,
Անհաս ոլորտում կտեսնենք միշտ քեզ՝
Քո փայլից այրվող զարմանք հայացքով:

ՏՈՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԵՐԵՎՄԱՆ

ՄԱՅԻՍԻ 6

Զատկի հինգերորդ կիրակի օրը տոնվում է **Խաչի երևում՝** պարզապես երևման խաչ բացատրությամբ:

Երուսաղեմի Կյուրեղ պատրիարքի ժամանակ Սիոն լեռան վրա տեղի է ունենում խաչանման լուսահրաշ մի երևույթ, որը Կյուրեղը նամակով նկարագրում է Կոստանդին Բ կայսրին (337թ.): Այս դեպքն է հիշատակվում Զատկի Ե կիրակի օրը, և այդ առթիվ կարդացվում է Կյուրեղ եպիսկոպոսի՝ Կոստանդինոսին ուղղած նամակը Անդաստանի ընթերցվածների սկզբում:

Համբարձում. Զատկից քառասուն օր անց, Հինանց վեցերորդ յոթնյակին, հինգշաբթի օրը, տոնվում է Փրկչի վեր բարձրանալը կամ համբարձումը Ձիթենաց լեռան վրայից: Այս տոնը տասնօրյա է, նրան հաջորդում է Հոգեգալուստը:

Ծանոթ. Հայ ժողովրդի մեջ Համբարձումն անվանվում է **Վիճակի օր,** որովհետև Հուդայի փոխարեն վիճակով ընտրվեց Մադաթիան (որժ. Ա. 26), և այդ օրն է, որ հայ մայրերն ու աղջիկները հատուկ արարողություններով վիճակի խրախճանք էին անում՝ վիճակահանության մեջ քրիստոնեական ոգի դնելով:

Այս առումով գեղարվեստական սքանչելի օրինակ է Մեծն Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմի նախերգանքը *(Համբարձման գիշերը):*

Խոր Վիրապցի Հարոյանների ընտանիքը առաջիններից մեկն է, ում համար անցած տարի (7 տարվա նկուղային կյանքից հետո) բնակարան է կառուցվել «Կառուցենք Հավատով» օրագրի շրջանակներում: 2006թ-ին Հայ Առաքելական եկեղեցին համագործակցության պայմանագիր կնքեց Միջազգային Հաբիթաթի հետ, որպեսզի միասին պայքարեն աղքատ բնակարանային պայմանների դեմ: Առաջին «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ շինարարական ծրագիր» շրջանակներում սեպտեմբերին ավելի քան 300 տեղական և միջազգային կամավորներ համախմբվեցին Գավառ քաղաքում գտնվող խորհրդային շրջանից անավարտ մնացած 24 բնակարանոց շենքի շինարարությանը մասնակցելու համար: Աշխարհասփյուռ հայ եկեղեցիները մասնակցեցին շինարարական ծրագրին՝ աջակցելով ֆինանսապես և բուն շինարարական աշխատանքներին մասնակցելով: Գավառի շենքի բացման ընթացքում Ջիմմի և Ռոզալին Քարթերները նշեցին իրենց ոսկե հարսանիքը: Նույն ծրագրի շրջանակներում հանրապետության տարբեր մարզերում ավարտին հասցվեցին 13 կիսակառույց բնակարաններ: Արդյունքում՝ 37 ընտանիքներ կարողացան տեղավորվել իրենց նոր տներում, մինչև հայաստանյան ցրտաշունչ ձմռան գալը:

2007-ի ապրիլին Սուրբ էջմիածնի Գևորգյան ճեմարանում մեկնարկեց ամենամյա երկրորդ «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Շինարարական Ծրագիրը», որին իր հայրապետական օրհնությունը բերեց Վեհափառը: Շինարարական աշխատանքները կընթանան մինչև հոկտեմբեր, բնակարանային բարվոք պայմաններ ունենալու հնարավորություն տալով 37 ընտանիքների՝ ի խորհրդանշումն Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի և Հայ Առաքելական եկեղեցու 36 թեմերի:

-Հայ Առաքելական եկեղեցին ուրախ է այս ծրագիրը Հաբիթաթի հետ շարունակելու համար: Սա ոչ միայն տոնախմբություն է, ուր մարդիկ հավաքվում են կարիքավորի մասին հոգալու, այլ նաև մի կարևոր քայլ է տնային աղքատությունը Հայաստանից իսպառ վերացնելու ուղղությամբ,- իր ելույթում նշեց

ԿԱՌՈՒՑԵՆՔ ՀԱՎԱՏԻ ՇԱՂԱԽՈՎ

ԱՄՆ-ի Արևելյան թևի հայկական համայնքի հոգևոր հովիվ Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը:

Շինարարական աշխատանքներին կըմասնակցեն տարբեր երկրներից ժամանող կամավորներ: Ռուս-ուսի տված, նրանք տնատերերի, տեղական կամավորների, նվիրատուների, անհատների և Հայ Առաքելական եկեղեցու հոգևորականների հետ կաշխատեն կիսակառույց տների շինարարության վրա, որոնք ընտանիքներն սկսել են դեռ տարիներ առաջ, բայց բավարար միջոցներ չունենալու պատճառով չեն կարողացել ավարտել:

Հայկական Հաբիթաթի առաքելությունն է՝ նպաստել ՀՀ-ում համայնքների զարգացմանը, աջակցել պարզ ու հարմարավետ կացարանների կառուցմանը, օգնել կարիքավոր ընտանիքներին՝ բարելավելու իրենց բնակարանային պայմանները: Հայկական Հաբիթաթը գտել է այս խնդրի լուծման ճանապարհը: Ընտանիքը, որն ունի միջին եկամուտ, ի վիճակի է վերցնել անճամկետ փոխառություն, ձեռք բերել պարզ, հարմարավետ և մատչելի կացարան, միևնույն ժամանակ հոգալով ընտանիքի կարիքները: Այս կենսական, կարևոր նպատակը իրականացնելու համար Հաբիթաթը հայթայթում է անհրաժեշտ միջոցներ, հույս ներշնչում բազմաթիվ ընտանիքների՝ կոչ անելով, որ եկեղեցիներն ու անհատները միանան «Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ շինարարական ծրագրին» հովանավորեն գոնե մեկ ընտանիքի:

Լոռու մարզում «Կառուցենք Հավատով» ծրագիրն սկսվեց Մարգահովիտ համայնքից: Անտիրյանների ընտանիքը ծրագրին մասնակցելու հայտ էր ներկայացրել անցած տարի, սակայն մեկ անձով նրանք համալրվել են մրցույթից հետո: Շատ փոքր տարածքում՝ 2 սենյականոց բնակարանում, բնակվում է 6 անձ: Անավարտ կից 2 սենյակը կկառուցվի Հաբիթաթի և եկեղեցու օգնությամբ: Շինարարական աշխատանքներին աջակցում են միջազգային կամավորները՝ էմիլի Ալոն և Ռոջեր Ֆոքսը: Նրանք շինիրապարակում աշխատելու փորձ չունեն, բայց խանդավառությամբ են մասնակցում շինարարությանը: Անտիրյաններին օգնում են նաև տեղի կամավորները, հարևան-բարեկամները, նաև քահանաները:

-Մեծագույն ուրախություն է, որ բացի հոգևոր ծառայությունից մեր աջակցությունն ենք բերում մեր հոտին: Խնդիրը սոսկ աշխատանքի մեջ չէ, կարևորը համախմբվածությունն է, քանզի ժամանակի ընթացքում սերմանված հուսահատությունը փարատվում է, երբ տեսնում են, որ իրենց շուրջն են համախմբվում մարդիկ և ուզում են օգտակար լինել,- նշում է Մարգահովիտ գյուղի հոգևոր հովիվ Տեր Սողոմոն քահանա Ավետիսյանը:

Ծրագրի շրջանակներում Լոռու մարզում նորոգ բնակարանների տեր կդառնան 12 ընտանիքներ:

Հ.Գ.- Սկսած 2000 թ-ից Հայկական Հաբիթաթը օգնել է շուրջ 300 ընտանիքների բարելավելով նրանց տնային պայմանները: 3 մլն բնակչություն ունեցող Հայաստանում դեռևս ավելի քան 40 հազար ընտանիքներ ապրում են չափահիշերիին չհամապատասխանող բնակարանային պայմաններում: Բազում մարդիկ ապրում են վագոն տնակներում, նկուղներում կամ չվերանորոգված բնակարաններում:

Ն. ԴԱՎԹՅԱՆ

«Ի՞ՆՉ ՊԱՏԱՍԽԱՆ ՊԻՏԻ ՏԱՆՔ»...

ՀԱՄԱՍՓՅՈՒՌ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ք. Վանաձոր, թիվ 23 միջն. դպրոցի ուսուցչուհի

Օրը մեռնում է, գարուն է ու ցուրտ:

Խոհերի տակ կքած քայլում եմ փողոցով, քայլում ու փորձում եմ գտնել պատասխանը մի հարցի, որ վաղուց ի վեր թմբկահարում է միտքս ու անվերապահորեն պատասխան պահանջում:

Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ ուզում ինքս ինձնից, ինչու՞ այլոց պես չեմ ապրում օրվա հետ՝ սեփական հոգսերով:

Տագնապ կա հոգուս մեջ ու լռելն ամոթ է:

Հիշում եմ տարիներ առաջ երգում էինք՝

Եթե զարթնեն մեր պապերը,
Ի՞նչ պատասխան պիտի տանք...

Հետ շրջվենք ու հարցնենք մեզ. ո՞վ էինք՝ ով ենք դարձել, ի՞նչ էինք ուզում՝ ինչ ենք ստացել, ու՞ր ենք գնում, տեղ կհասնե՞ք... Բազում են հարցերը, իսկ պատասխա՞ն...

Հիշում եմ ծովացած ժողովրդին, բարձրացրած բռունցքներ, ընդվզում, սրբացած հոգիներ, մի ողջ ազգ դարձել էր մի բռունցք. չկար մեծ ու փոքր, այր ու կին, պաշտոնյա և ծառայող: Բարձրացրած բռունցքներով ժողովուրդը երեսը շրջել էր իր կառավարությունից և վանկարկում էր՝

- Պայքա՛ր, պայքա՛ր մինչև վերջ...

Հիշենք մի պահ, թե ինչ մաքառումների, զոհողությունների ու զրկանքների գնով մեզ տրվեց մեր այսօրը: Ու հիմա ի՞նչ ենք անում, ի՞նչ ունենք: Դարձել ենք ծերացող ժողովուրդ, ահավոր ծանր հարված է հասել մեր գենոֆոնդին:

«Մայրերի ձեռքերում է ազգերի ճակատագիրը».- սա Նժդեհն է: Այսօր, ցավոք, հայ մոր կերպարն է աղճատվում, այն մոր, որն իր բարոյական կերպարով և ամեն, ամեն ինչով, անգամ սիրով մայրական, զանազանվում էր աշխարհի բոլոր մայրերից (թող ներեն նրանք):

Մեր հայրենակցուհիները նետվել են ժայռերի ծերպերից, գետի ջրերում խեղդվել, որ «շուն օսմանի» շունչը չդիպչի իրենց, իսկ այսօր հայ կինը... Ընդունելով հանդերձ սոցիալական բոլոր դժվարությունները, միևնույն է, դատապարտելի են նրանք, ովքեր պղծում են հայուհու ավանդական բարոյական կերպարը:

Վտանգը մեծ է, և այն սպառնում է հայ ընտանիքին:

Չկա հայ ընտանիք. մեկ կամ երկու երեխան արդեն ինքնասպանություն է: Շատերն իրենց ընտանիքներն «ազատում են տատ ու պապ ծանր բեռից», և խորտակվում է երեխաների ճակատագիրը: Ընտանիքը դառնում է թերի: Եկել է ժամանակ, երբ հայ զավակը նույնիսկ կաշառք է տալիս՝ ծնողներին ծերանոցում տեղավորելու համար: Ամո՛թ ու նախատինք մեզ. այս ու՞ր ենք հասել...

Հայ զինվոր... Գլուխս խոնարհում եմ բոլոր ժամանակների հայ նահատակների առաջ ու ցավով տեսնում, որ այսօր հայ երիտասարդներից շատերը ամեն գնով, կապերով, աջակցությամբ խուսափում են ծառայելուց... Հապա երգի տողե՞րը՝

Դեռ ճամփա ունինք,
Պիտ հասնինք Սասում,
Քաջերի հողը մեզ է սպասում...

Չե՞ք ամաչում այն քաջերից, պատասխան ունե՞ք...

Խոսում են վճարովի բանակի մասին: Նոր բան չեմ ասելու, վարձու զինվորը երկիր չի պահի, փողով թշնամու դեմ չեն կանգնում. ոգի է պետք, նվիրում ու արժանապատվություն: Դարերի ու ազգերի պատմությունն է դա ապացուցել:

Գնում ենք Եվրոպա. է՛, գնացեք, ո՞վ է ձեր ճամփան կտրում: Աշխարհն այս չի ընդունի, այն չի ընդունի, հետ չմնանք աշխարհից... Ինչ է, մրից ելանք, մրջու՞րն ընկանք: Առաջ մեկն էր քաշում մեր ականջները, հիմա մեկ ուրի՞շը. ու՞ր մնաց անկախությունը: Ինչու՞ այդ Եվրոպան մեզանից մի լավ բան չի վերցնում: Չուրջիչ չկա, երիտասարդները չեն ամուսնանում, աշխատանք չկա, օթևան չունեն:

Ես էլ եմ մայր, ունեմ երեխաներ և բազում հարցեր: Բայց առաջին հերթին ես հայուհի եմ, ունեմ երազանք իմ Մեծ ու Անկախ, նորոգ ու պայծառ հայրենիքի մասին: Իբրև այս երկրի զավակ՝ հետևյալ առաջարկն եմ անում: Թող պետությունը միջոցներ գտնի (ինքը գիտի՝ որտեղից) և ամեն քաղաքում ու ավանում ամեն տարի այդ միջոցներով բնակարաններ կառուցի: Ձագսից դուրս եկող յուրաքանչյուր ամուսնական զույգ, իբրև ընծա, ստանա 2 սենյականոց բնակարանի բանալի: Այդ բնակարանն իրավունք չունենա վաճառելու, փոխանակելու: Դա տրվի ընտանիք ստեղծելու և զավակներ ունենալու համար: Եվ եթե որևէ մի զույգ հանդգնի լքել երկիրը, բնակարանը ետ վերցվի: Թող պետությունը յուրաքանչյուր նորածնի հիվանդանոցային բոլոր ծախսերը հոգա, հատկացնի միանվագ նպաստ, բժշկական հարցերը լուծի, որ երիտասարդ մայրը չվախենա զավակ ծնելուց (որ հայ նորածինը չհայտնվի աղբարկղում): Ի վերջո, շատերը չեն ունենում երեխաներ, որովհետև ապրուստի միջոց չունեն, իսկ մենք ծերացող ժողովուրդ ենք դառնում: Ատամներով կառչել ենք դարերի փեշերից, հազար մահի միջով անցել, մեզ հասակակից ազգեր քիչ են մնացել, ու հիմա, այս լուսավոր դարում, կնքե՞նք մեր մահկանացուն. բա նե՞նք... Ինչու՞ ենք կապկում ուրիշներին և մեր սերունդը դաստիարակում ենք էժանագին ֆիլմերով ու անդառնալիորեն կործանում մեր ազգի բարոյական նկարագիրը: Ուզում եմ հարց տալ երկրի կառավարիչներին: Նրանք ի՞նչ երեսով են նայում հենց Հայաստանի առաջին ալիքով ցուցադրվող կինոնկարները, իրենց մայրերի, իրենց երեխաների հետ: Որտե՞ղ են թաքցնում գլուխները. կամ գուցե արդեն չե՞ն թաքցնում: Եվ ո՛վ զարմանք, մեր երկրում մեր ոսկեդենիկն է աղավաղվում, խեղվում: Առանց ամոթի՝ անգամ հայհոյանքն է թարգմանվում: Փրկի՛ր մեզ, Տեր Աստված...

Կործանվում է հայ ընտանիքը. մանկան ե՞ղբը, բա պատասխա՞նը...

Առջևում ընտրություններն են. հավաքներ, խոստումներ, երդումներ (հիշենք՝ Աստված երդում չի ընդունում) և խոսքեր, շքեղ ու գեղեցիկ խոսքեր: Հայոց Աստվածատուր լեզուն հուրհրատում է բոլորի շուրթերին:

Ներո՛ղ եղեք, պարոնա՛յք պատգամավորության թեկնածուներ: Հարգելով հանդերձ ձեզանից շատերին՝ ես կրկին ուզում եմ, իբրև հայ մայր, ձեզ հիշեցնել, որ ձեզ հարկ է առաջին հերթին Հավատ առ Աստված, անմնացորդ նվիրում, ազնվություն ու արդարություն և մի քիչ էլ հայասիրություն: Բոլորդ ուզում եք ծառայել, առջևում ազգն է ծառա դառնում: Սթափվե՛ք, խնդրում եմ, անսացե՛ք բանականության ձայնին:

Ուզում եմ հիշեցնել ազգի նվիրյալներից մեկի՝ Իսրայել Օրու խոսքերը. «Թող Հայաստանը թագավոր ունենա, թեկուզ այդ թագավորը հրամայե առաջին օրն իսկ գլխատել ինձ»:

Եթե դուք այս սկզբունքով գործեք, եթե առաջնությունը տրվի խղճին ու պատասխանատվությանը, ապա մեզ ապագա կունենանք: Այլապես, Աստված մի արասցե, եթե հակառակը լինի...

Ու՞մ են պետք օրեցօր շքեղացող մեր քաղաքները. ինչի՞ կամ ու՞մ համար են կառուցվում, ո՞վ է ապրելու այնտեղ, Դուք ավերակացու՞ պիտի թագավորեք...

Սթափվե՛ք. ժողովուրդը նայում է ձեզ, նա ձեզ չի՛ ների: Հիշե՛ք երգի տողերը՝ **Դեռ ճամփա ունենք...** Թե չէ խոսում եք, խոսում ու խոսում: Գործե՛ք ամնամ, գործ արեք ազգի համար: Չի՛ կարելի հաղթանակած ժողովրդի հետ այդպես վարվել: Վախեցե՛ք Սեղ Դատաստանից:

Բայց ես հայ եմ, հայ եմ ու Արարատ եմ, հայ եմ ու Սասնա թոռ եմ, ունեմ Հույս, Հավատ: Գիտեմ, որ օրհասական պահերին իմ ժողովուրդը երկնել է անհատներ, որոնք արժանի են եղել հայ անունը կրելուն, որոնք իրենց ուսերին, ազգի հետ, տարել են այս երկրի խաչը ու չեն վհատվել երբեք: Հաղթանակը նրանք են կռել:

Հավերժական ընթացք՝ պատմության քայլարշավին մասնակցող իմ ժողովրդին, և Աստված մեզ օգնական:

Հուսամ՝ մենք դառնալու ենք Ազատ ու Անկախ, Մեծ ու Հզոր Հայաստանի Հանրապետության քաղաքացի...

ՀՀ առաջին խորհրդարանական Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17- րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններին է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաև զանգվածային լրատվամիջոցներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին»:

Տեղեկացնում ենք, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանի 2006թ.-ի տարեկան զեկույցը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններին: Հաշվի առնելով տարեկան զեկույցի ծավալը՝ 223 էջ, ՁԼՄ-ները և համապատասխան հասարակական կազմակերպությունները զեկույցին կարող են ծանոթանալ Պաշտպանի պաշտոնական վեբ-կայքի՝ www.ombuds.am, «Զեկույցներ» բաժնում:

2006թ. տարեկան զեկույցի տպագիր տարբերակը, պատրաստ լինելուն պես, կտրամադրվի նաև ՁԼՄ-ներին և համապատասխան հասարակական կազմակերպություններին:

Զեկույցում տեղ գտած առաջարկությունները, գնահատականները և եզրակացությունները հիմնված են ինչպես Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների, այնպես էլ Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ կատարված ուսումնասիրությունների և դիտարկումների հիման վրա:

Զեկույցը բաղկացած է հետևյալ 4 հիմնական մասերից.

1-ին բաժնում ներկայացված են 2006թ. ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված աշխատանքներն ըստ իր գործունեության հիմնական ուղղությունների՝ վիճակագրական տվյալների բազմակողմանի վերլուծություն, դիմում-բողոքների և դիմումատուների հետ աշխատանք, մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեություն, օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեություն, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացում, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն, միջազգային համագործակցություն, փորձագիտական խորհրդի գործունեության ապահովում,

2-րդ բաժնում առաջին անգամ անդրադարձ է կատարվում մարդու իրավունքների խախտումների հանգեցնող նորմատիվ-իրավական ակտերի և դրանց առանձին դրույթների վերլուծությանը, որտեղ ներկայացված են նաև գործող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի հետագա կատարելագործմանն ուղղված Պաշտպանի գործողությունները,

3-րդ բաժնում մարդու իրավունքների մասին տեղեկատվությունը ներկայացված է ըստ հանրային մարմինների, իրավակիրառ պրակտիկայում տեղ գտած թերությունների, ինչպես նաև՝ մարդու իրավունքների առավել տիպական խախտումները, դրանց պատճառները և նպաստող պայմանները,

4-րդ բաժնում ներկայացված է տեղեկատվություն հասարակության առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության և պահպանման վիճակի մասին: Այս ոլորտի համապատասխան օրենսդրական դրույթները վերլուծվում են իրավակիրառ պրակտիկայի հետ անմիջական կապի մեջ:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

375002, Երևան, Պուշկինի փող. 56ա,
հեռ. 53 85 77 (ֆաքս),
ombuds@ombud.am,
www.ombuds.am

ԸՆԴԴԵՄ ԾԽԱԽՈՏԻ

«Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելու և «Ծխախոտի դեմ պայքարի մասին» շրջանակային կոնվենցիայի վավերացման երկրորդ տարեդարձի կապակցությամբ Հայաստանի ամերիկյան համալսարանում անցկացվեց «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի (միավորում է 25 ՀԿ) երկրորդ համաժողովը: Դրա շրջանակներում ներկայացվեց Հայաստանում 2004-2006թ.թ. իրականացված հակածխախոտային ծրագրերի հավաքածուն, ցուցադրվեցին ՀԿ-ների կողմից մշակված հակածխախոտային նյութեր:

ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ Արտավազդ Վանյանի խոսքերով՝ նախարարության առողջ ապրելակերպին նպաստող քաղաքականություններից մեկն էլ ծխախոտի դեմ պայքարի ծրագրի իրականացումն է, որում պետք է ներգրավվի նաև հասարակությունը: 1990-ական թ.թ.-ին աշխարհում ծխելուց մահացել է 1,5 մլն մարդ:

Ըստ Հոգեբանների ասոցիացիայի նախագահ Ռուբեն Աղուզումցյանի՝ դեռահասների շրջանում ասոցիացիայի անցկացրած հետազոտություններից պարզվել է, որ ծխում է նրանց 14-15 տոկոսը: Ի դեպ, հետազոտության արդյունքները փաստել են, որ առավել շատ ծխախոտ օգտագործում են այն հիմնարկներում, որոնք կոչված են պայքար մղելու երևույթի դեմ: Ռ. Աղուզումցյանի հավաստմամբ՝ ծխելն ազդում է նաև մարդկանց հոգեկան առողջության վրա, մասնավորապես՝ հիշողության:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վերջին տվյալներով՝ Հայաստանում ծխում է չափահաս տղամարդկանց 67,5, կանանց՝ 3,1 տոկոսը: Մեր երկրում յուրաքանչյուր տարի ծխախոտի օգտագործման հետևանքով մահանում է ավելի քան 3000 մարդ, ինչը 3 անգամ ավելի է դժբախտ պատահարների, թունավորումների և այլ պատճառներից առաջացած մահացության ցուցանիշից: Ըստ փորձագիտական գնահատականի՝ ծխելու հետևանքով մարդիկ կորցնում են 17 տարի իրենց աշխատանքային ակտիվ կյանքից:

Ծխախոտի օգտագործման հետևանքով առաջացած հիվանդություններից (ենթաստամոքսային, լյարդի, բերանի, կոկորդի, թոքերի քաղցկեղներ, սրտամկանի սուր ինֆարկտ, ատամների և լնդերի հիվանդություններ և այլն) աշխարհում յուրաքանչյուր տարի մահանում է 5 մլն մարդ, 20-րդ դարում մահացել է 100 մլն-ից ավելի: ԱՀԿ տվյալներով՝ աշխարհի երեխաների գրեթե կեսը (700-900 մլն) ենթարկվում է 1,2 մլրդ ծխող մեծահասակների ծխախոտի ծխի ազդեցությանը:

ՄԱՐԴՈՒ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ «ՁԳԱՅՈՂ» ՀԱՄԱԿԱՐԳԻՀ

Միացյալ Նահանգների Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտի գիտնականներն ստեղծել են համակարգիչ, որն «զգում է» իր տիրոջ տրամադրությունը և նրան օգնում հաղթահարելու սթրեսը:

Ինչպես հաղորդել է բրիտանական «Նյու Սայենտիստ» շաբաթահանդեսը, եթե համակարգչով աշխատող մարդը շատ վատ տրամադրության մեջ է, ապա դիսփլեյի էկրանին հայտնվում են արցունքներ: Եվ ընդհակառակը, երբ նրա տերը հրաշալի տրամադրություն ունի, ապա համակարգիչն սկսում է ծիծաղել և բերկրանք է ապրում:

Մարդու տրամադրությունը որսալուն օգնում է դիսփլեյում ներսարված խցիկը՝ լայն լուծաչափի ունակությամբ: Այն տեղեկատվություն է մատակարարում հատուկ ծրագրին, որը, կախված մարդու դեմքի փոփոխվող միմիկայից, ստեղծում է համակարգչային հույզեր:

ԱՌԱՋԱՐԿ

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ-ն, հանդիսանալով «Համաշխարհային Ուսուցում/ՀԿ հզորացման ծրագրի» իրավահաջորդը, շարունակում է նպաստել քաղաքացիական հասարակության սուբյեկտների, մասնավորապես ՀԿ սեկտորի զարգացմանն ու կայացմանը՝ հենվելով գործընկերության սկզբունքի վրա:

Պետական կառույցների, առևտրային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության, մասնավորապես, ՀԿ սեկտորի միջև օրենսդրորեն կարգավորված փոխհարաբերությունն ընդունված է անվանել սոցիալական գործընկերություն: Այն էական նշանակություն ունի սոցիալական տարբեր հիմնախնդիրների լուծման և հասարակության զարգացման հարցում: ՀԿ-ների ունեցած մարդկային և տեխնիկական ռեսուրսները, պրոֆեսիոնալիզմը և ձեռք բերված հմտությունները հանդիսանում են անհրաժեշտ նախապայման պետական կառույցների և ՏԻՄ-երի համար՝ ներգրավելու ծառայությունների շրջանակ կանոնակարգված ձևով: Սոցիալական գործընկերությունը նաև փոխշահավետ համագործակցության մի ձև է ՀԿ-ի և պետական ու մասնավոր սեկտորների միջև: Սա առաջին հերթին ավելի թափանցիկ և մասնակցային է դարձնում համայնքային խնդիրների վերհանման ու լուծումների առաջադրման և իրականացման հարցերը, որը բխում է թե՛ ՀԿ-ների և թե՛ համայնքի կառավարման մարմնի առաքելություններից: Երկրորդ հերթին՝ համայնքի, կամ քաղաքի ղեկավար ներկայացուցիչները շահագրգռված կլինեն, օգտագործելով ՀԿ-ի արդեն իսկ ձեռք բերված թե՛ մարդկային և թե՛ տեխնիկական փոքրաթիվ միջոցները, իրականացնել համայնքի սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված գործունեություն:

ՊՀԲՀ ՀԿ-ի պրոֆեսիոնալ մարդկային ռեսուրսների, համապարփակ լոբբիգի քարոզարշավի կազմակերպման և իր ցանցի ՀԿ-ների օգնությամբ կարողացավ իրականացնել սոցիալական գործընկերության կանոնակարգի ներդրմանն ուղղված գործողություններ և ունենալ հաջողություններ: Արդեն իսկ սոցիալական գործընկերության կանոնակարգը և դրանից բխող մեխանիզմները կիրառվում են Վանաձոր քաղաքում և 2007թ.-ի ապրիլ ամսին հայտարարվելու է երեք դրամաշնորհ տեղի ՀԿ-ների համար՝ համայնքային առաջնային խնդիրներ լուծելու նպատակով: Գորիս քաղաքում արդեն ընդունվել է սոցիալական գործընկերության կանոնակարգը, իսկ կիրառման մեխանիզմները առկա են լինելու 2008թ.-ին: Աշտարակի և Գյումրիի քաղաքապետերների հետ անհատական հանդիպումների արդյունքում ստացվել են բանավոր համաձայնություններ՝ սոցիալական գործընկերության կանոնակարգը ընդունելու և հաստատելու նպատակով:

Առաջարկում ենք բոլոր ՀԿ-ներին, ովքեր գիտակցում են ՀԿ ինքնուրույնության գաղափարի կարևորությունը և իրապես մտածում են համայնքային խնդիրների լուծման մասին, միանալ մեզ՝ ջատագովելու սոցիալական գործընկերության կանոնակարգի կիրարկումը տեղական մակարդակներում:

«Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ

Ձեր որոշման մասին հայտնեք Երևան ,Աբովյան փող. 44, բն. 6 հասցեով, կամ զանգահարեք 56-81-05 հեռախոսահամարով:

Թերթը հրատարակվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ: Երկշաբաթաթերթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական միության դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Գ տարի
Հիմնադիր և հրատարակիչ՝
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ (+374 322) 2-29-67
Ֆաքս՝ (+374 322) 4-47-81
Էլ. փոստ՝ lc@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Հրայր ՍԱՐՈՒԽԱՆ
Խմբագիր՝ Ալսեմ ՍԱՐՈՒԽԱՆՑԱՆ
Համակարգչային ձևավորող՝ Նարինե ԱԶԱՐՅԱՆ

Թերթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրապարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 30.04.2007 թ.
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «Զանգակ-97» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար